| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրեդիտ | Լսարանային ժամ (դ/գ/լ) | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|---|---|---|---|---|---|
| *05/H08* | *Համակարգչագիտություն* | *3* | *0/12/0* | *I* | *Քննություն* |
| *10/H34* | *Հոգեբուժություն* | *3* | *12/0/0* | IV | *Քննություն* |

### 2.1.3. Մասնագիտական պարտադիր դասընթացներ

Մասնագիտական պարտադիր կրթամասը կարող է ընդգրկել 8-ից մինչև 16՝ երեքից վեց կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթաց: Կրթամասի ընդհանուր աշ խատածավալը ծրագրում սահմանված է 57 կրեդիտ: Սա մագիստրոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

1. Մագիստրոսական ծրագիր՝
**«Սոցիալական և քաղաքական հոգեբանություն»**

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրեդի | Լսարանային ժամ | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|---|---|---|---|---|---|
| *10/H01* | *Ընտանիքի հոգեբանություն և խորհրդատվություն* | *3* | *12/0/0* | *I* | *Քննություն* |
| *10/H02* | *Անձի ժամանակակից կոնցեպցիաներ* | *3* | *12/0/0* | *I* | *Քննություն* |
| *10/H04* | *Միջմշակութային հոգեբանություն* | *3* | *12/0/0* | *I* | *Քննություն* |
| *10/H05* | *Սթրեսը և հաղթահարման ստրատեգիաները* | *3* | *12/0/0* | *I* | *Քննություն* |
| *10/H06* | *Հոգեֆիզիոլոգիա* | *3* | *12/0/0* | *I* | *Քննություն* |
| *10/H10* | *Անալիտիկ հոգեբանություն* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| *10/H09* | *Շտկողական հոգեբանություն* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| *10/H07* | *Հոգեվերլուծություն* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| *10/H08* | *Կոգնիտիվ վարքային հոգեթերապիա* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10/H11 | *Հոգեբանական հետազոտության մեթոդաբանություն* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| 10/H16 | *Արտ-թերապիա* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| 10/H17 | *Քաղաքական հոգեբանություն* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| 10/H18 | *Միջանձնային հարաբերությունների և բանակցությունների վարման հոգեբանություն* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| 10/H19 | *Հոգեկարգավորում* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| 10/H15 | *Նեյրոլեզվաբանական ծրագրավորում* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| 10/H25 | *Գեշտալտ թերապիա* | *3* | *12/0/0* | *IV* | *Քննություն* |
| 10/H22 | *Հոգեբանական պրակտիկում* | *3* | *12/0/0* | *IV* | *Քննություն* |
| 10/H28 | *Սուիցիդալ վարքի հոգեբանություն* | *3* | *12/0/0* | *IV* | *Քննություն* |
| 10/H29 | *Մարմնակողմնորոշիչ թերապիա* | *3* | *12/0/0* | *IV* | *Քննություն* |

2. Մագիստրոսական ծրագիր՝
**«Կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա»**

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրեդիտ | Լսարանային ժամ | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|---|---|---|---|---|---|
| 10/H01 | *Ընտանիքի հոգեբանություն և խորհրդատվություն* | *3* | *12/0/0* | *I* | *Քննություն* |
| 10/H02 | *Անձի ժամանակակից կոնցեպցիաներ* | *3* | *12/0/0* | *I* | *Քննություն* |
| 10/H03 | *Կլինիկական հոգեբանության հիմնախնդիրները* | *3* | *12/0/0* | *I* | *Քննություն* |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10/H06 | *Հոգեֆիզիոլոգիա* | *3* | *12/0/0* | *I* | *Քննություն* |
| 10/H07 | *Հոգեախտորոշում* | *3* | *12/0/0* | *I* | *Քննություն* |
| 10/H10 | *Անալիտիկ հոգեբանություն* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| 10/H35 | *Հոգեախտաբանություն* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| 10/H13 | *Կոգնիտիվ վարքային հոգեթերապիա* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| 10/H32 | *Հոգեթերապիայի հիմունքներ* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| 10/H12 | *Հոգեվերլուծություն* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| 10/H19 | *Հոգեկարգավորում* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| 10/H16 | *Արտ-թերապիա* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| 10/H15 | *Ընտանեկան հոգեբանություն* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| 10/H25 | *Գեշտալտ թերապիա* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| 10/H33 | *Հոգեթերապիայի պրակտիկում* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| 10/H31 | *Տրանսակտային վերլուծություն* | *3* | *12/0/0* | *IV* | *Քննություն* |
| 10/H22 | *Հոգեբանական պրակտիկում* | *3* | *12/0/0* | *IV* | *Քննություն* |
| 10/H29 | *Մարմնակողմնորոշիչ թերապիա* | *3* | *12/0/0* | *IV* | *Քննություն* |
| 10/H36 | *Կլինիկական սուիցիդոլոգիա* | *3* | *12/0/0* | *IV* | *Քննություն* |

## 2.1.4. Կամընտրական դասընթացներ

Կամընտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր

աշխատածավալը ծրագրում սահմանափակված է 9 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջդիսցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 2÷4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատածավալը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

1. Մագիստրոսական ծրագիր՝
**«Սոցիալական և քաղաքական հոգեբանություն»**

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրեդիտ | Լսարանային ժամ | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|---|---|---|---|---|---|
| *10/H13* | *Կառավարման հոգեբանություն* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| *10/H14* | *Կիրառական էթնոհոգեբանություն* | | | *II* | *Քննություն* |
| *10/H24* | *Գովազդի և PR հոգեբանություն* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| *10/H20* | *Իշխանության և լիդերության հոգեբանություն* | | | *III* | *Քննություն* |
| *10/H26* | *Սոցիալ-հոգեբանական տեխնոլոգիաներ* | *3* | *12/0/0* | *IV* | *Քննություն* |
| *10/H30* | *Մարդկային ռեսուրսների կառավարում* | | | *IV* | *Քննություն* |

2. Մագիստրոսական ծրագիր՝
**«Կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա»**

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրեդիտ | Լսարանային ժամ | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|---|---|---|---|---|---|
| *10/H05* | *Սթրեսը և հաղթահարման ստրատեգիաները* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10/H11 | Հոգեբանական հետազոտության մեթոդաբանություն | | | II | Քննություն |
| 10/H37 | Շեղվող վարքի հոգեբանություն | 3 | 12/0/0 | III | Քննություն |
| 10/H24 | Կոնֆլիկտաբանություն | | | III | Քննություն |
| 10/H18 | Նեյրոլեզվաբանական ծրագրավորում | 3 | 12/0/0 | IV | Քննություն |
| 10/H21 | Սոցիալ-հոգեբանական տեխնոլոգիաներ | | | IV | Քննություն |

## 2.2. Հետազոտական կառուցամաս

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ ***գիտական սեմինար, գիտահետազոտական աշխատանք, գիտահետազոտական պրակտիկա, գիտամանկավարժական պրակտիկա և մագիստրոսական թեզ:***

***Գիտական սեմինարը*** ծրագիրն իրականացնող կառույցի (գիտական կազմակերպություն,, ամբիոն, կենտրոն և այլն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է, որի անցկացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ: Կազմակերպվում է ուսումնառության բոլոր 5 կիսամյակներում, որոնցից յուրաքանչյուրում հատկացվում է 3 կրեդիտ:

***Գիտահետազոտական աշխատանքի*** բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական թեզի թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն ևս կազմակերպվում է ուսումնառության բոլոր կիսամյակներում, որոնցից յուրաքանչյուրում կազմում է 3 կրեդիտ աշխատածավալ:

***Գիտահետազոտական պրակտիկան*** կազմակերպվում է 5-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ աշխատածավալ:

***Գիտամանկավարժական պրակտիկան*** կազմակերպվում է 5-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Այն ևս ունի 3 կրեդիտ աշխատածավալ:

***Մագիստրոսական թեզի*** կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 5-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 15 կրեդիտ աշխատածավալ:

# Մաս II.

## ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

# 1. ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

*Դասընթացների տեղեկագիրքը* նախատեսված է «Հոգեբանության» ամբիոնում հեռակա ուսուցմամբ իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջներն ու ամփոփիչ ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, , ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

# 1. Մագիստրոսական ծրագիր

## «Սոցիալական և քաղաքական հոգեբանություն» Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

**05/H08. Համակարգչագիտություն** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողների մեջ զարգացնել ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտին վերաբերվող ընդհանուր տեսական և պրակտիկ գիտելիքներ: Ծրագրի նպատակն է նաև ուսանողներին զինել ինֆորմատիկայի բնագավառում տարբեր ծրագրերի ուսումնասիրությունով և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը վերաբերող գիտելիքներով:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա**

1.1.Լսել և հասկանալ լսածի հիմնական միտքը և հատուկ ինֆորմացիան,

1.2. Վերարտադրել և վերլուծել տվյալ թեմաները,

**2. կկարողանա**

2.1. Ինքնուրույն օգտվել համակարգչից,

2.2. Բացատրել մասնագիտական տերմինները,

2.3. Քննարկել թեման՝ օգտագործելով նոր թեմատիկ մասնագիտական բառապաշար,

**3. կտիրապետի**

3.1. Մասնագիտական տարբեր ինֆորմացիոն ծրագրերին,

3.2. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների անձնահատուկ կառույցներին,

3.3. Թեմատիկ մասնագիտական նոր բառապաշարին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** ԷՀՄ-ի պատմությունը, սերունդները: Անհատական համարգչի կառուցվածքը, արտաքին և ներքին սարքեր, ելքի-մուտքի սարքեր: Ինֆորմացիայի ներկայացման ձևերը, չափման միավորները: Հիշողության տեսակներ և կազմակերպման ձևեր: Օպերացիոն համակարգեր հիմնական տարրերը: Windows օպերացիոն միջավայրում աշխատանք պատուհանների և ֆայլերի հետ: – **վերջնարդյունք**՝ Կկարողանա ինքնութույն գրել, մուտքագրել մագիստրական թեզը, կատարել հղումներ, համարակալում, թվարկում, նկարների, աղյուսակների և գրաֆիկների տեղադրում, կկարողանա կառուցել բովանդակություն և գրականության ցանկը և այլն: ***Թեմա 2՝*** Համակարգչային և կիրառական ծրագրեր: Ուտիլիտային ծրագրեր: Վիրուսներ և հակավիրուսային ծրագրեր: ՏՀՏ գրաֆիկական սարքավորումներ և դրանց կիրառումը մասնագիտական ոլորտում: Հաշվողական ցանցերի դասակարգում: Լոկալ ցանցերի տոպոլոգիա: Ինտերնետ ցանցի ծառայություններից օգտվելու մեթոդներ:

Մասնագիտությանը առնչվող օգտակար կայքեր – **վերջնարդյունք**՝ Կկարողանա ճիշտ և անվտանգ աշխատել համացանցում:: ***Թեմա 3***՝ MS Office Word տեքստային խմբագրիչի գործիքային վահանակի ֆունկցիաները: MS Office Word տեքստային խմբագրիչում տեքստի մուտքագրում, խմբագրում և ձևավորում: Աշխատանք աղյուսակների և օբյեկտների հետ MS Office Word տեքստային խմբագրիչում: MS Office Word տեքստային խմբագրիչի միջոցով մասնագիտական թեստերի պատրաստում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում – **վերջնարդյունք**՝ Կկարողանա պատրաստի մագիստրոսական թեզի համար պատրաստել սհնորհանդես և ներկայացնել այն: ***Թեմա 4***՝ MS Office Excel էլեկտրոնային աղյուսակների գործիքային վահանակի ֆունկցիաները: Տվյալների մուտքագրում, տիպերի հայտարարում և աղյուսակի ձևավորում MS Office Excel էլեկտրոնային աղյուսյակում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում – **վերջնարդյունք**՝ աշխատել ցուցակների հետ:***Թեմա 5***՝ Թվաբանական գործողություններ տվյալների հետ, դիագրամների կառուցում MS Office Excel էլեկտրոնային աղյուսյակում: Աշխատանք ֆունկցիաների հետ MS Office Excel էլեկտրոնային աղյուսյակում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում – **վերջնարդյունք**՝ Կկարողանա ինքնութույն գրել, մուտքագրել մագիստրական թեզը, կատարել հղումներ, համարակալում, թվարկում, նկարների, աղյուսակների և գրաֆիկների տեղադրում, կկարողանա կառուցել բովանդակություն և գրականության ցանկը և այլն: ***Թեմա 6***՝ MS Office Power Point շնորհանդեսային ծրագրի գործիքային վահանակի ֆունկցիաները: MS Office Power Point ծրագրում դրվագների ավելացում, ձևավորում, յուրաքանչյուր դրվագի համար անիմացիաների կարգավորում; MS Office PowerPoint ծրագրի դրվագներում օբյեկտների ներմուծում, ձևավորում, դրվագում յուրաքանչյուր օբյեկտի համար անիմացիաների կարգավորում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում – **վերջնարդյունք**՝ գրաֆիկական պատկերներով, նկարներով, աղյուսակներով ներկայացնել մագիստրոսական թեզը:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,

- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 1. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 2. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 3. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H24. Կոնֆլիկտաբանություն** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**
համակարգային գիտելիքներ հաղորդել կոնֆլիկտաբանության հիմնական հասկացությունների, հոգեբանական հայեցակարգային մոտեցումների, ինչպես նաև և կոնֆլիկտների վերլուծման ու հաղթահարման գործնական եղանակների վերաբերյալ:

**Կրթական արդյունքներ.**
Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա**
- կոնֆլիկտի ուսումնասիրություն դասական և ժամանակակից հայեցակարգերը
- կոնֆլիկտի ուսումնասիրության մեթոդները
- կոնֆլիկտների հիմնական տիպաբանությունները
- կոնֆլիկտային անձանց տեսակները
- կոնֆլիկտային վարքի ռազմավարությունները

**2. կկարողանա**
- առանձնացնել կոնֆլիկտի օբյեկտը, առիթը, պատճառը
- վերլուծել կոնֆլիկտային իրադրությունը
- բացահայտել կոնֆլիկտագենները

- մշակել կոնֆլիկտի հաղթահարման տարբերակները

**3. կտիրապետի**

- արդյունավետ բանակցություններ կազմակերպելու հմտություններին
- կոնֆլիկտի կառավարման և կարգավորման կանոններին
- կոնֆլիկտի հաղթահարման եղանակներին

**Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Կոնֆլիլտաբանությունը որպես գիտություն: **Վերջնարդյուքը՝** Կիմանան կոնֆլիլտաբա-նության զարգացման պատմությունը և հիմնա-կան հասկացությունները: Կկարողանան տարբերա-կել կոնֆլիկտաբանության հիմնահարցերը տարբեր գիտակարգերում: Կտիրապետեն կոնֆլիկտի հոգեբանականան ուսում-նասիրության հիմնական մեթոդներին: **Թեմա 2.** Կոնֆլիլտաբանության տեսական հիմքերը: **Վերջնարդյուքը՝** Կտիրապետեն կոնֆլիլտա-բանության տեսական դա-սական հիմքերին և սոցիա-լական կոնֆլիկտի ուսում-նասիրության ժամանա-կակից մոտեցումներին: **Թեմա 3.** Կոնֆլիկտը տարբեր հոգեբանական հայեցակարգերում: **Վերջնարդյուքը՝** Կիմանան կոնֆլիկտի ուսումնասիրության տար-բեր հայեցակարգային մոտեցումները: Կկարողանան բնութագրել կոնֆլիկտի հետ աշխա-տելու հոգեվերլուծական, կոգնիտիվ և հումանիս-տական հոգեբանության մոտեցումները: **Թեմա 4.** Կոնֆլիկտի ընդհանուր բնութագիրը: **Վերջնարդյուքը՝** Կիմանան կոնֆլիկտների դասակարգման տարբեր տիպաբանությունները: Կկարողանան վերլուծել կոնֆլիկտի կառուցվածքի բաղադրիչները: Կտիրապետեն կոնֆլիկտի զարգացման յուրաքանչյուր փուլին բնորոշ հատուկ դրսևորումներին: **Թեմա 5.** Կոնֆլիկտագենները և կոնֆլիկտային անձնավորության տիպերը: **Վերջնարդյուքը՝** Կիմանան կոնֆլիկտա-գենների տեսակներն ու կոնֆլիկտային անձանց տիպերը: Կկարողանան բացահայտել ստի վերբալ և հարալեզվական դրսևո-րումները: Կտիրապետեն կոնֆլիկտային անձանց հետ փոխհարաբերություն-ների կարգավորման հա-մապատասխան կանոն-ները: **Թեմա 6.** Միջանձնային կոնֆլիկտ: **Վերջնարդյուքը՝** Կիմանան միջանձնային կոնֆլիկտների տեսակներն ու պատճառները, ինչպես նաև ներանձնային և միջանձնային կոնֆլիկտնե-րի փոխազդեցության պատճառա-հետևանքային կապերը: Կկարողանան զանազանել մանիպուլյատիվ վարքի տեսակները:Կտիրապետեն կոնֆլիտային իրադրու-թյունների ուսումնասի-րության և վերլուծության կանոններին: **Թեմա 7.** Կոնֆլիկտների ախտորոշումը, կանխարգելումը և հաղթահարումը: **Վերջնարդյուքը՝** Կիմանան կոնֆլիկտի հաղթահարման տեսակ-ները՝ կանխարգելում, կարգավորում, կառա-վարում, լուծում, տրանս-ֆորմացում: Կկարողանան առանձ-նացնել կոնֆլիկտի գոր-ծառույթների կառուցողա-կան և ապակառուցո-ղական բնութագրիչները: Կտիրապետեն կոնֆլիկտի ախտորոշման միջոցով պրոբլեմների բացա-հայտման և լուծման եղանակներին: **Թեմա 8.** Վարքի ստրատեգիաները կոնֆլիկտի ժամանակ: **Վերջնարդյուքը՝** Կիմանան Թոմաս-Քիլմանի կոնֆլիկտային վարքի տեսությունը: Կկարողանան տարբերակել կոնֆլիկ-տային վարքի համագործակցության և համառության ռազմա-վարությունները: Կտիրապետեն կոնֆլիկ-տային վարքի ճիշտ ռազմավարության ըն-տրության օրինաչափ-փություններին: **Թեմա 9.**

Կոնֆլիկտը ընտանիքում: **Վերջնարդյունքը՝** Կիմանան ընտանեկան կոնֆլիկտների պատ-ճառներն ու առանձնա-հատկությունները: Կկարողանան ախտորոշել ընտանեկան կոնֆլիկտ-ների իրական պատճառ-ները և մշակել հաղթա-հարման ուղիները: Կտիրապետեն նտանեկան հոգեբանական խորհրդա-տվություն անցկացնելու հմտությյուններին:
**Թեմա 10.** Կոնֆլիկտային վարքի իրավասություն: **Վերջնարդյուքը՝** Կիմանան հաղորդակցման խոչընդոտներ՝դիրքորոշումներ, կարծրատիպեր, վախեր և այլն: Կկարողանան կիրառել կոնֆլիկտային վարքի կողեքսը: Կտիրապետեն կառուցողական քննադա-տության և անվտանգ ու արդյունավետ հաղոր-դակցման տեխնիկաներին: **Թեմա 11.** Միջխմբային, քաղաքական, միջէթնիկ, միջպետական կոնֆլիկտներ: **Վերջնարդյուքը՝** Կիմանան քաղաքական կոնֆլիկտների տեսակները և դրսևորման հոգեբա-նական առանձնահատ-կությունները: Կկարողանան բնութագրել միջէթնիկ և միջպետական կոնֆլիկտները: Կտիրապետեն զինվո-րական կոնֆլիկտների հիմնախնդիրներին: **Թեմա 12.** Կոնֆլիկտի լուծմանը ողղված արդյունավետ բանակցությյունների հոգեբանություն: **Վերջնարդյուքը՝** Կիմանան բանակցությունների միջոցով կոնֆլիկտների հաղթահարման եղանակ-ները: Կկարողանան առանձնացնել բանակ-ցությունների հիմնական փուլերը և մարտավա-րությունները: Կտիրապետեն հոգեբա-նական միջնորդության հմտություններին:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 4. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 5. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 6. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

**2. ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

# Լրացական դասընթացներ

**18/H01. Մասնագիտական օտար լեզու (անգլերեն-1-2)-** (0 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, ստուգարք*

**Նպատակը.**

Երկու կիսամյակ տևողությամբ ուսումնական գործունեության ընթացքում "Սոցիալական հոգեբանություն" ֆակուլտետի ուսանողերին ուսուցանել անգլերեն լեզու, որն իր մեջ ներառում է քերականական ժամանակաձևերի, կառուցվածքների ուսումնասիրում և ամրապնդում՝ նախօրոք մշակված վարժությունների և թեմատիկ նյութերի միջոցով, համապատասխան մասնագիտական տերմինների, բառերի ու արտահայտությունների ուսումնասիրում և տիրապետում՝ համապատասխան տեքստերի միջոցով, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում՝ օգնելու սովորողներին զարգացնելու խոսքային հմտություններն ու կարողությունները, լրացուցիչ մասնագիտական և ոչ մասնագիտական տեքստերի վրա ինքնուրույն աշխատանք՝ օգտագործելով համապատասխան բառարաններ (տեքստերի թարգմանություն՝ անգլերենից-հայերեն, հայերենից-անգլերեն, տեքստերի վերարտադրում, բառարանային աշխատանք և այլն): Ծրագրի շրջանակներում նախատեսված է սովորողներին ծանոթացնել լեզուն ուսումնասիրելու հետ կապված խնդիրներին, նպատակներին, սկզբունքներին, ինչպես նաև օգնել հաղթահարելու սովորելու ընթացքում հանդիպող դժվարություններն ու խոչընդոտները:

Դասընթացի ընթացքում ուսանողները ձեռք կբերեն համապատասխան լեզվական տեսական և գործնական գիտելիքներ, որոնք նրանց կօգնեն արդյունավետորեն և ինքնուրույն օգտվելու անգլերեն լեզվով մասնագիտական տեքստերից, հաղորդակցվելու, մասնակցելու բանավեճերի, քննարկումների, ներկայացնելու հավելյալ նյութեր /պրեզենտացիաներ/:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա**

1.1. անգլերեն լեզվի ժամանակաձևերը, քերականական կառուցվածքները, մասնագիտական բավարար բառապաշար,
1.2. անհրաժեշտ ուսումնական ձեռնարկների, դասագրքերի արդյունավետ օգտագործման ձևերն ու եղանակները՝ խթանելու համար անգլերեն լեզվի զարգացմանն ու խորացմանը,
1.3. համապատասխան մեթոդիկա՝ մասնագիտական տերմինների և բառապաշարի մտապահման և ամրապնդման համար,

1.4. Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում:

**2. կկարողանա**

2.1. ճշտորեն օգտագործել քերականական ժամանակաձևերը և կառուցվածքները,

2.2. օգտվել անգլերեն լեզվով մասնագիտական գրականությունից, մեթոդական ուղեցույցներից՝ խորացնելու համար մասնագիտական գիտելիքները,

2.3. արդյունավետորեն օգտագործել բառարանները,

2.4. պատրաստել պրեզենտացիաներ, զեկուցումներ,

2.5. խոսակցել անգլերենով՝ կիրառելով մասնագիտական տերմինների և արտահայտությունների անհրաժեշտ պաշար,

2.6. լսել և հասկանալ անգլերեն լեզվով տեքստեր,

2.7. մասնակցել բանավոր քննարկումների, բանավեճերի կամ էլ՝ երկխոսությունների,

**3. կտիրապետի**

3.1. քերականական ժամանակաձևերին ու կառուցվածքներին,

3.2. անգլերեն լեզվի տեսական և գործնական գիտելիքներին,

3.3 անգլերենի խոսակցական լեզվին /բավարար, միջին կամ ավելի բարձր մակարդակով՝ կախված սովորողների ընդունակություններից/,

3.4. մասնագիտական տերմինաբանությանն ու բառապաշարին,

3.5. անգլերենից՝ հայերեն և հայերենից՝ անգլերեն մասնագիտական և ոչ մասնագիտական տեքստերի թարգմանչական տեխնիկային:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1***՝ Subject introduction. Presentation of the syllabus. (Placement test). Short talk with the students for the Evaluation of the student's individual needs and assessment of general English knowledge – **վերջնարդյունք**՝ Introduction of the course syllabus, objectives and outcomes of the course. As long as everyone arrives at ISEC with different knowledge and ability levels due to their unique schooling situation and academic strengths we check Ss's level of English through placement test and discussions ***Թեմա 2***՝ The Concept of International Law – **վերջնարդյունք**՝ To get aquainted with the concept of international Law as a system of legal relations which condition social action to serve the common interest. To be able to use the thematic vocabulary n the context. ***Թեմա 3***՝ International Organizations – **վերջնարդյունք**՝ Demonstrate knowledge and critical understanding of the historical development of international organization, their structure, concept and their current operations in different issue areas 2) Analyze contemporary debates on the role and effect of international organizations as forums for inter-state cooperation and as actors in international relations ***Թեմա 4***՝Mid-term test – **վերջնարդյունք**՝ The students take a written test graded 7 balls which comprises their knowledge in the above mentioned themes. We check knowledge of the thematic vocabulary phrases, pepositions and also the ability to use the terms in the context through translations. ***Թեմա 5***՝ The United Nations Organizations – **վերջնարդյունք**՝ To get aquainted with the History of the United Nations Organization, the main organs of the UN: the General Assembly,the Security Council,the Economic and Social Council,the

Trusteeship Council,the International Court of Justice, and ththe UN Secretariat. Thematic Vocabulary*Թեմա 6*՝ Prepartion for the final exam, revision of the previous units,prof. Vocab – **վերջնարդյունք**՝ To enable the students to thoroughly prepare for the final eaxm *Թեմա 7*՝ Final exam – **վերջնարդյունք**՝ To make a **final** review of the topics covered and assessment of each student's knowledge of the prof.vocabulary and the ability to use it within a context. *Թեմա 8*՝ **The law of treaties – վերջնարդյունք**՝ Pprincipally treaties between states—are considered authoritative statements of international law. Treaties are the strongest and most binding type because they represent consensual agreements between the countries who sign them. Here the task is to get aqauained with teaties, their classification, conclusion, invalididty, temination and suspention. *Թեմա 9*՝ Dilomatic and Consular Law -**վերջնարդյունք**՝ Get acquainted with the main principles of diplomatic and consular law. Special attention is given to 1)Diplomatic law as part of public international law, 2)The historical development of diplomatic law, 3)Terms and definitions in diplomatic law, 4)Diplomatic immunity, 5)Personal inviolability, 6)Diplomatic communications, 7)Inviolability of premises/diplomatic asylum, 8)Taxation of diplomats and consuls *Թեմա 10*՝ Mid-term Exam – **վերջնարդյունք**՝ The students take a written test graded 7 balls which comprises their knowledge in the above mentioned themes. We check knowledge of the thematic vocabulary phrases, pepositions and also the ability to use the terms in the context through translations.

*Թեմա 11*՝ Human Rights and International Law - **վերջնարդյունք**՝ To get acquainted with the Concept of the International Protection of Hman rights definition of universal rights, Racism, Aartheid, Treaties on Human Rights. To be able to use Prof. Vocab *Թեմա 12*՝ Introduction of Project titles and skills of preparing a Power-point presentation

Video presentation on the topic “Secrets of presentation by Steve Jobs” – **վերջնարդյունք**՝ To get acquainted with the main steps of preparing and presenting a presentation.

## Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ

**10/H02. Անձի ժամանակակից կոնցեպցիաներ** (4 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ ուսանողներին ներկայացնել անձը բացատրող և սահմանող ժամանակակից տեսությունները, քննարկել տարբեր մոտեցումներ անձի վերաբերյալ, ինչպես նաև դիտարկել անձն այդ մոտեցումների հարացույցում:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** կլինիկական հոգեբանության հիմնական ոլորտները, հոգեկան գործընթացների և վարքային խանգարումների հիմնական առանձնահատկությունները, ծագման պատճառները, հոգեթերապևտիկ հնարավորությունները:

**2. կկարողանա** բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր տեղեկությունները իրենց գիտելիքների հետ, կունենան անհատական գործունեության ընթացքում կլինիկական հոգեբանության ոլորտում ուսումնասիրություններ և հոգեբանական աշխատանք կատարելու հմտություններ և կարողություններ:

**3. կտիրապետի** հոգեբանական գիտելիքները գործնականում կիրառելու մեթոդներին, ճշգրիտ հոգեախտորոշման, այցելու-կլինիկական հոգեբան հարաբերություններ արդյունավետ կառուցելու հոգեբանական միջոցներին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Անձը ժամանակակից գիտական համակարգում: ***Թեմա 2՝*** Պոստֆրեյդիստներ: ***Թեմա 3՝*** Ա.Ադլեր և անհատական հոգեբանություն: ***Թեմա 4՝*** Կ.Հորնի և հումանիստական հոգեվերլուծություն: **Վերջնարդյունքը՝** Ուսանողը հստակ կիմանա պոստֆրեյդիստների տեսությունները, նաև հասուն անձի հոգեկանի որոշ հարցերի պատասխանները՝ կապված մանկիկության հետ:

***Թեմա 5՝*** Է.Էրիքսոն և կյանքի էպիգենետիկ մոդելը: ***Թեմա 6՝*** Վ.Ռայխ և հոգեսոմատիկա: ***Թեմա 7՝*** Կ.Ռոջերս և հումանիստական հոգեբանություն: **Վերջնարդյունքը՝** Ուսանողը կուսումնասիրի հոգեբանության զարգացումը՝ ժամանակակից մոտեցումներով ***Թեմա 8՝*** Է Ֆրոմ և հումանիստական հոգեվերլուծություն: **Վերջնարդյունքը՝** Ուսանողը հստակ պատկերացում կունենա հոգեսոմատիկայի մասին: ***Թեմա 9՝*** Հ.Ս.Սալիվան և հոգեբուժության միջանձնային տեսությունը: ***Թեմա 10՝*** Կ.Ռոջերս ,Ա.Մասլոու և հումանիստական հոգեբանություն: **Վերջնարդյունքը՝** Ուսանողը մանրամասն կուսումնասիրի ժամանակակից ամենաhզոր ուղղություններից մեկը՝ էքզիստենցիալ հոգեբանությունը ***Թեմա 11՝*** Ձեն-բուդդիզմի հիմնադրույթները: ***Թեմա 12՝*** Ալբերտ Բանդուրա և սոցիալ-կոգնիտիվ տեսությունը: ***Թեմա 13՝*** Ռ.Մեյ և էքզիստենցիալ հոգեբանություն: ***Թեմա 14՝*** Վ.Ֆրանկլ և լոգոթերապիա: **Վերջնարդյունքը՝** կիմանա անձի տեսությունները, նաև հասուն անձի հոգեկանի որոշ հարցերի պատասխանները, որը կապված է մանկիկության հետ:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,

- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| Քննության տեսակը | Միավոր |
|---|---|
| 7. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 8. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 9. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| Հաճախում | Միավոր |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

3. ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H01. Ընտանիքի հոգեբանություն և խորհրդատվություն** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել ընտանիքի հոգեբանության և խորհրդատվության ոլորտին վերաբերվող հոգեբանական տեխնիկաների, առանձնահատկություններին, առարկայի, նպատակների, խնդիրների, ուսումնասիրության մեթոդների մասին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** ընտանիքի հոգեբանության և խորհրդատվության կառույցների զարգացման մեխանիզմները, վարքի կարգավորման տարբեր հնարները:

**2. կկարողանա** ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր տեղեկությունները իրենց գիտելիքների հետ, կունենան անհատական գործունեության ընթացքում ընտանեկան խորհրդատվության առանձնահատկություններն ուսումնասիրելու հմտություններ և կարողություններ:

**3. կտիրապետի** ընտանիքի հոգեբանության և խորհրդատվության գիտելիքները գործնականում կիրառելու մեթոդներին, հասարակական ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորման, ուսման, դաստիարակության, աշխատանքային գործունեության արդյունավետության բարձրացման հոգեբանական միջոցներին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** **Ընտանիքի զարգացման պատմական ընթացքը, տեղը և դերը ժամանակակից հասարակական հարաբերություններում:** Ընտանիքի ստեղծման ու զարգացման ընթացք, ձևավորման նորմեր ու կանոններ ընտանիքի բոլոր անդամների փոխհարաբերություններում: Ընտանիքը հասարակության հիմնական բջիջ: Պատմական ակնարկ, սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական վերափոխումներ: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ ընտանեկան հոգեբանության պատմական ակնարկը: Կկարողանան՝ Ընտանիքը դիտարկել իբրև հասարակության բջիջ:

***Թեմա 2՝*** **Ամուսնության տեսակներ:** Ավանդական ամուսնություն: Փորձնական ամուսնություն: Սեզոնային ամուսնություն: Կոմունալ ընտանիք: Բացահայտ ամուսնություն: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ ամուսնության տեսակները: Կկարողանան՝ ամուսնության տեսակների հետ կիրառել հոգեբանական համապատասխան աշխատանք:

***Թեմա 3՝*** **Ամուսնալուծություն:** Ամուսնական հարաբերությունները քայքայող գործոնները: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ ամուսնալուծության հոգեբանական պատճառները: Կտիրապետեն՝ ամուսնալուծության հետ աշխատելու հոգեբանական տեխնիկաներ ընտանեկան խորհրդատվության շրջանակներում:

***Թեմա 4՝*** **Ընտանեկան հոգեախտորոշում:** Զրույց: Ընտանիքի նկարը: Վիսբանդենյան հարցարան: Քոչարյանի հարցաթերթիկ: Ամուսնական կոնֆլիկտների ախտորոշում: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ Ընտանեկան հոգեախտորոշման խնդիրները, հոգեախտորոշման գործընթացի փուլերը: Կկարողանան՝ իրականացնել խմբի առանձին անդամների անձային հատկանիշների ընտանեկան հոգեախտորոշման գործընթաց ըստ նպատակի:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 10. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 11. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 12. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| Հաճախում | Միավոր |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

4. ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H12. Հոգեվերլուծություն** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

**Դասընթացի նպատակն է՝** ուսումնասիրել հոգեվերլուծության տեսության և պրակտիկայի հիմունքները, ձևավորել մասնագիտական գործունեության մեջ դրանց կիրառման հմտություններ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա**

- Հոգեվերլուծության զարգացման փուլերը, մոտեցման տրամաբանությունը, հասկացությունները, մեթոդները,
- անգիտակցականի օրինաչափությունները և գործընթացերը,
- հոգեկան շեղումների առաջացման մեխանիզմներն ու պատճառները,
- անձի պաշտպանական մեխանիզմների տեսակները, զարգացումը, դրսևորումները,
- կենսական դժվարությունների և կոնֆլիկտների հաղթահարման ուղիները:
- հոգեկան խնդիրների առաջացման և բուժման հոգեվերլուծական մոդելը:

**2. կկարողանա**

- վերլուծել հոգեկան գործընթացները և վիճակները հոգեվերլուծական տեսակետից, կիրառել հոգեվերլուծական հասկացությունները,
- հավաքագրել, վերլուծել, համադրել և ընդհանրացնել անգիտակցական վերաբերյալ գիտելիքները,
- առաջ քաշել և ստուգել վարկածներ հոգեկան երևույթների և հոգեբանական իրավիճակների վերլուծության, հոգեբանական խնդիրների լուծման ժամանակ,
- բացահայտել և վերլուծել անգիտակցական դրսևորումները առօրյա կյանքում, երազներում,
- վերլուծել պաշտպանական մեխանիզմների բնույթը,
- բացահայտել հոգեբանական խնդիրների, կոնֆլիկտների, ախտանիշների իմաստն ու պատճառները,
- կանխատեսումներ կատարել հնարավոր զարգացումների վերաբերյալ, վերաիմաստավորել մասնագիտական գործունեության մեջ ծագող դժվարութոնները:

1. **կտիրապետի**

- երազների վերլուծության և մեկնաբանման տեխնիկաներին,
- անձի զարգացման և շեղումների առաջացման հարցում պատճառ-հետևանքային կապերի բացահայտման հմտություններին,
- հոգեվերլուծական մտածողության, հոգեկան երևույթների վերլուծության և համեմատության միջոցներին,
- ինքնավերլուծության, ինքնաճանաչման, ստեղծագործական մոտեցման զարգացման մեթոդներին,
- պաշտպանական մեխանիզմների բացահայտման և մեկնաբանման հմտություններին
- հոգեկան խնդիրների հոգեվերլուծական գնահատման և բուժման մոտեցումներին:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Հոգեվերլուծության ներածություն*:* Հոգեվերլուծության տեղը XX դարի մշակույթում: Հոգեվերլուծությունը որպես գիտություն: Զ.Ֆրեյդը որպես հոգեվերլուծության հիմնադիր: Զ.Ֆրեյդի աշխատությունները: Հոգեվերլուծության ակունքները՝ բնագիտություն, գրականություն, փիլիսոփայություն: Հոգեվերլուծության հիմնական հասկացությունները: Հոգեվերլուծական ուսմունքը անգիտակցականի մասին: Անգիտակցականը հոգեկանի կառուցվածքում: Մղումների տեսությունը: Անձի կառուցվածքային մոդելը: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ հոգեվերլուծության ակունքներւ, հիմնական հասկացությունները, հոգեվերլուծական մոտեցման առանձնահատկությունները, հոգեվերլուծության կապը արվեստի և գրականության հետ, անգիտակցականի ուսումնասիրման մեթոդները: Կտիրապետեն հոգեվերլուծական հասկացություններին: Կկարողանան գնահատել անգիտակցականի դերն ու ազդեցությունը անձի հոգեկանում և կյանքում:
**Թեմա 2՝** Հոգեվերլուծության զարգացումը: Հոգեվերլուծության ճյուղավորումը՝ Ա.Ադլեր, Կ.Գ. Յունգ: Հոգեվերլուծության հետագա զարգացումը: Պայքարը բնազդների և տրավմայի տեսությունների միջև: Ես-ի հոգեբանությունը և հարաբերությունների վաղ տեսությունը /Ա.Ֆրեյդ, Բալինտ, Բոուլբի, Սպից/: Հոգեվերլուծության ժամանակակից տեսությունները Հունգարական դպրոց / Ֆերենցի/, նույնության տեսություն / Էրիքսոն/, հարաբերությունների ժամանակակից տեսությունը /Կերնբերգ/, ինքնության հոգեբանություն / Կոհուտ/, հոգեվերլուծության զարգացումը Գերմանիայում: Հոգեվերլուծության զարգացումը և արդի իրավիճակը Հայաստանում: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ հոգեվերլուծական հայացքների զարգացման ճանապարհը, տարբեր մոտեցումների առանձնահատկությունները: Կկարողանան՝նկարագրել հոգեկան երևույթները հոգեվերլուծական տեսակետից: Կտիրապետեն մասնագիտական հաղորդակցման համար անհրաժեշտ միջոցներին: Կկարողանան՝ վերլուծել հոգեկանի կառուցվածքը, աշխատել սկզբնաղբյուրների հետ:
**Թեմա 3՝** Դասական հոգեվերլուծության հիմնադրույթները: Սխալ գործողությունների իմաստը և նշանակությունը: Սխալ գործողությունների մեխանիզմները: Սեռական մղումները անգիտակցականի կառուցվածքում: Լիբիդո: Կինը և տղամարդը:

Երկսեռականության սկզբունքը: Երազների բնույթը և ֆունկցիաները: Երազի աշխատանքի մեխանիզմները: Երազների մեկնաբանության արվեստը: Անձի պաշտպանական մեխանիզմները / մոռացում, արտամղում, պրոյեկցիա, ռացիոնալացում, մերժում և այլն/: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան՝ առօրյա կյանքում անգիտակցականի դրսևորման տեսակները, մեխանիզմները, երազների մեկնաբանման մեթոդները, երազի աշխատանքի մեխանիզմները, պաշտպանական մեխանիզմների տեսակները և զարգացման առանձնահատկությունները: Կկարողանան՝ պլանավորել անգիտակցականի դրսևորումների և պաշտպանական մեխանիզմների հոգեվերլուծական ուսումնասիրությունը:

**Թեմա 4՝** Անձի զարգացումը հոգեվերլուծության տեսակետից: Սեռական մղումները անգիտակցականի կառուցվածքում: Լիբիդո: Երկսեռականության սկզբունքը: Սեռական շեղումներ /ինվերսիա, պերվերսիա/: Հոգեսեռական զարգացման փուլերը: Էդիպյան բարդույթ: Սեռականության ժամանակակից հոգեվերլուծական տեսակտները / սեռական նույնացում, տղայի սեռական զարգացումը, աղջկա սեռական զարգացումը/: Օբյեկտային հարաբերությունների զարգացման փուլերը: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան՝ լիբիդոյի, սեռական մղումների դերը հոգեկանի զարգացման հարցում, հոգեսեռական զարգացման փուլերը, սեռական խանգարումները: Կկարողանան՝գնահատել հոգեկանի զարգացումը հոգեսեռական փուլերի տեսակետից, հոգեկան խնդիրների և սեռական շեղումների առաջացման ռիսկի գործոնները: Կկարողանան գնահատել անձի հոգեկանի գործելակերպի առանձնահատկությունները հոգեսեռական զարգացման փուլերի տեսակետից:

**Թեմա 5՝** Նևրոզների հոգեվերլուծական տեսությունը: Վախ և նևրոզ: Վախը և պաշտպանական մեխանիզմները: Նևրոտիկ ախտանիշները և դրանց իմաստը: Նորմա և պաթոլոգիա: Հոգեկան կոնֆլիկտ: Ախտածին կոնֆլիկտներ: Նարցիզմի հասկացությունը հոգեվերլուծության մեջ: Դասական նևրոզներ: Հիսթերիա կամ կոնվերսիոն նևրոզ, կպչուն մտքերի նևրոզ, դեպրեսիվ նևրոզ կամ նևրոտիկ դեպրեսիա:Ժամանակակից հետդասական նևրոզներ: Նարցիստիկ նևրոզ: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան՝ֆոբիաների և նևրոզների տեսակները, ախտանշանների առաջացման մեխանիզմները, ներքին կոնֆլիկտների դերը, նորմայի և պաթոլոգիայի հոգեվերլուծական տեսակետը, հոգեվերլուծական հոգեթերապիայի առանձնահատկությունները: Կկարողանան՝գնահատել ախտածին երևույթների առաջացման գործոնները, զարգացման և դրսևորման առանձնահատկությունները, իրականացնել իրավիճակի զարգացման կանխատեսում :

**Թեմա 6՝** Հոգեվերլուծության տեխնիկան և պրակտիկան: Հոգեվերլուծության մեթոդները: Հոգեվերլուծական թերապիան, դրա տարբերությունը թերապիայի մյուս տեսակներից: Էթիկայի կանոնները: Հոգեվերլուծության կիրառությունը բժշկության, հոգեբանության, խմբային և ընտանեկան թերապիայի, հասարակության մեջ: Բազմոցի կիրառումը հոգեվերլուծական պրակտիկայում: Չեզոքությունը հոգեվերլուծական աշխատանքում: Հոգեվերլուծական պայմանագիր՝ կադր: Դիմադրության հասկացությունը, դրսևորումները և վերլուծման տեխնիկան: Տրանսֆերի բնութագիրը: Տրանսֆերենցիալ նևրոզ: Աշխատանքային ալյանսի և կոնտրտրանսֆերի հասկացությունները: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան

հոգեվերլուծական թերաօիայի առանձնահատկությունները, մեթոդներն ու տեխնիկաները, ցուցումներն ու հակացուցումները, էթիկայի կանոնները, հոգեկան խնդիրների առաջացման և բուժման հոգեվերլուծական մոդելը: Կկարողանան՝իրականացնել դիտում, ունկնդրում, ինքնավերլուծություն, կանխատեսում, որոշումների ռիսկերի գնահատում: Կտիրապետեն մասնագիտական էթիկայի կանոններին, հոգեկան խնդիրների հոգեվերլուծական գնահատման և բուժման մոտեցումներին:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 13. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 14. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 15. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

**ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** <u>դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:</u>

**10/H06. Հոգեֆիզիոլոգիա** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Առարկայի **նպատակն** է՝ հոգեկան գործընթացների ֆիզիոլոգիական հիմքների, մեխանիզմների ուսումնասիրությունը, որոնք դիտարկում են նաև նեյրոնային, սինապսային և մոլեկուլային մակարդակում: Ինչպես նաև

դասընթացի նպատակն է ունկնդիրներին մատուցել գիտելիքներ և ծանոթացնել ընկալման, զգայական արտացոլման, հիշողության, շարժումների, հույզերի, մտածողության, գիտակցության և այլ հոգեկան գործընթացների ուսումնասիրության ֆիզիոլոգիական մեթոդներին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը

**1. կիմանա** մատուցել գիտելիքներ ընդհանուր հոգեֆիզիոլոգիա առարկայի, մեթոդների, ժամանակակից գիտափորձարարական առաջընթացներին, հեռանկարներին և հոգեբանության մեջ ունեցած մեծ դերի մասին,

**2. կկարողանա**

Ունկդիրների մոտ ձևավորել գործնական հմտություններ, տեսական վերլուծություններ կատարելու կարողություններ և հոգեկան գործընթացների ֆիզիոլոգիական հիմքերի մասին պատկերացումներ,

**3. կտիրապետի**

ինքնուրույն ուսումնասիրություններ կատարելուն, մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ ունակություններ և հմտություններ ձևավորելուն:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1 – Գլխուղեղը որպես հոգեկանի օրգան:** Ներածություն, հոգեֆիզիոլոգիայի առարկան և խնդիրները, հոգեֆիզիոլոգիայի կապը հոգեբանության հետ: Հոգեկանը որպես արտացոլում: Գլխուղեղը և հոգեկանը: **Թեմա 2. – Հույզերի հոգեֆիիոլոգիա:** Հույզերը, դրանց դերը վարքում: Հուզական վիճակներ: Հուզական հակազդումների տեսակները: Դիմաարտահայտչականություն: Հույզերի նեյրոանատոմիա: Լիմբիական համակարգ: էքստրովերտություն: Սիմոնովի տեսությունը նյարդային համակարգի հոգեհուզական ոլորտի դրսևորումներում ենթակեղևային համակարգերի դերի մասին: Հույզերի հիմնական տեսություններ: **Թեմա 3. – Սթրեսի հոգեֆիզիոլոգիա:** Գաղափար սթրեսի մասին: Եզրույթի տեղեկատվական բնույթը: Սթրեսի գործոնները: Հ. Սելյե, նրա դերը սթրեսի տեսության մշակման հարցում: Սթրեսային հակազդումները, վեգետատիվ բաղադրիչները: Սթրեսակայունություն, սթրես – լաբիլություն: Սթրեսի նեյրոքիմիա: Սթրես ախտահարումներ: Հետվնասվածքային ախտանիշներ: **Թեմա 4. Ֆունկցիոնալ վիճակների հոգեֆիզիոլոգիա**: Ֆունկցիոնալ վիճակների բնորոշումը: Ֆունկցիոնալ վիճակների դերն ու նշանակությունը վարքում: Գլխուղեղի մոդելավորման համակարգը: Գիտակցական շարժողական հակազդումների երեք ֆունկցիանալ կառույցների վերաբերյալ Ա. Ռ. Լուրիայի տեսությունը: Գլխուղեղի տոնուսի ապահովումը: **Թեմա 5. Քնի հոգեֆիզիոլոգիա:** Քունը, դրա դերն ու նշանակությունը օրգանիզմի էներգետիկ պաշարների վերականգնման գործընթացում: Քնի տեսակները: Դանդաղ քնի բնութագիրը, վեց փուլերի նկարագիրը: Պարադոքսալ քուն, գործառույթները: Դանդաղ և պարադոքսալ քնի նեյրոքիմիա: Երազատեսություն, քնի էլեկտրոֆիզիոլոգիա:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու,

ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 16. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 17. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 18. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

5. **ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H10. Անալիտիկ հոգեթերապիա** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ուսանողին կրեդիտային համակարգով ուսումնական գործունեության ընթացքում գիտելիքներ հաղորդել Յունգյան հոգեբանական տեսության մասին, արքետիպերի, անձի զարգացման գործընթացում արքետիպերի ազդեցության, խառնվածքների՝ էքստրավերտ-ինտրովերտ, հոգեկանի ֆունկցիաների և , նրանց մեխանիզմների, երազատեսության, ակտիվ երևակայության մասին: Ծրագիրն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական գիտելիքներ, ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև իր անհատական գործունեության ընթացքում այցելուի հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելու հմտություններ և կարողություններ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** անալիտիկ հոգեբանության հիմնադիր Կ.Գ. Յունգի ստեղծագործական ուղու մասին: Անալիտիկ հոգեբանության հիմնական հասկացությունների մասին: Անձի կառուցվածքային էլեմենտները: Անհատական և կոլեկտիվ անգիտակցական, նրանց բովանդակությունը: Խառնվածքի տիպերը, հոգեկանի չորս ֆունկցիաները: Արխետիպերը: Հոգեբանությունը և ալքիմիան: Կրոնը,քաղաքականությունը Կ.Գ. Յունգի մեկնաբանությամբ:

**2. կկարողանա** հասկանալ արքետիպերի ազդեցությունն անձի ինդիվիդուացիայի գործընթացում: Կկարողանան մեկնաբանել երազները, ակտիվ երևակայական պատկերները և սիմվոլները, վերլուծել հեքիաթները և դրանք օգտագործել, որպես հոգեթերապիայի գործիքներ:

**3. կտիրապետի** անալիտիկ հոգեթերապիայի գործընթացին, երազատեսության մեկնաբանությանը և հոգեթերապիայում կիրառվող այլ մեթոդների /արտ թերապիա, հեքիաթի թերապիա, ավազի թերապիա/:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Անալիտիկ հոգեբանության առարկան: Կ.Գ. Յունգի կենսագրությունը և նրա տեսությունը: Ժամանակակից հիմնախնդիրները: **Վերջնարդյունքը՝** Ուսանողը կկտիրապետի անալիտիկ հոգեբանության մասին գիտելիքներին: ***Թեմա 2՝*** Գիտակցական, անգիտակցական, կոլեկտիվ անգիտակցական: Անձի կառուցվածքային էլեմենտները: **Վերջնարդյունքը՝** Ուսանողը պատկերացում կկազմի հոգեկանի մակարդակների մասին: ***Թեմա 3՝*** Լիբիդո (հոգեկան էներգիա): Պրոգրեսնռեգրես, Էնանտիոդրոմիա, փոխհատուցում /компенсация/: **Վերջնարդյունքը՝** Ուսանողը կտարբերակի լիբիդոյի հասկացությունը այլ հասկացություններից: ***Թեմա 4՝*** Խառնվածքի տիպերը, հոգեկանի ֆունկցիաները ըստ Կ.Գ.Յունգի: **Վերջնարդյունքը՝** Ոսանողը կկարողանա տարբերակել խառնվածքի տիպերը: ***Թեմա 5՝*** Էրոս և Լոգոս Արխետիպային կերպարներ՝ Անիմա/Անիմուս/Ստվեր, Պերսոնա: **Վերջնարդյունքը՝** Ուսանողը կտիրապետի արքետիպերի տեսությանը: ***Թեմա 6՝*** Երազատեսություն և երազների մեկնաբանություն, Երազի մեկնաբանության փուլերը: **Վերջնարդյունքը՝** Ուսանողը կտիրապետի երազատեսության մասին գիտելիքներին: ***Թեմա 7՝*** Անալիտիկ հոգեթերապիայի գործընթացը: **Վերջնարդյունքը՝** Ուսանողը կկարողանա կողմնորոշվել թերապևտիկ մոդելների մեջ:

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,

- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 19. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 20. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 21. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

### ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

6. **ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H05. Սթրեսը և հաղթահարման ստրատեգիաները** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

1. Ուսանողներին ուսուցանել <<Սթրեսը և հաղթահարման ստրատեգիաները>> առարկայի կառուցվածքի, բովանդակության հիմնադրույթները, հաղորդել հիմնարար գիտելիքներ սթրեսային իրավիճակների բնութագրերի և դրանցում տեղի ունեցող բնորոշ սոցիալ-հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական փոփոխությունների վերաբերյալ:
2. Ապահովել սթրեսային իրավիճակներում գործելու հոգեբանական պատրաստության անհրաժեշտ գիտատեսական և գործնական գիտելիքներով, ինքնակարգավորման, ինքնակառավարման հմտությունների բարձր մակարդակով:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա**

Սթրեսային իրավիճակների սոցիալ-հոգեբանական բնութագրերը, դրանց դասակարգման առանձնահատկությունները: Սթրեսային իրավիճակներում անձի կենսագործունեության ապահովման, հարմարման հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները, դրանցում առաջացող հոգեվիճակների սպեկտրը, հետվնասվածքային հոգեվիճակների առանձնահատկությունները:

**2. կկարողանա**

ինքնուրույն տարբերակել սթրեսային, հետվնասվածքային հոգեվիճակների յուրահատուկ տեղաշարժերն ու դրանց դասակարգման առանձնահատկությունները, ապահովել անձի, խմբերի հոգեճանաչման և հոգեբանական պատրաստության գործընթացի արդյունավետությունը:

**3. կտիրապետի**

անհատական, խմբային հոգեկարգավորման, առաջին հոգեբանական օգնության կազմակերպման և տարբեր սթրեսային իրավիճակներում ինքնակառավարման տեխնոլոգիաներին:

**Բովանդակություն.**

**Թեմա 1՝«**Սթրեսը և հաղթահարման ստրատեգիաները**» առարկան, նպատակը, խնդիրները, կառուցվածքը:** Սթրեսի հիմնախնդիրը: Առարկայի տեսական և պրակտիկ աղբյուրները: Սթրեսային իրավիճակներում հոգեֆիզիոլոգիական ոլորտներում կատարվող տեղաշարժերի բնութագրերը: «Սթրեսը և հաղթահարման ստրատեգիաները» առարկայի կառուցվածքը: **Վերջնարդյունքը՝** կծանոթանան առարկայի հիմնական բովանդակությանը և առանձնահատկություններին: **Թեմա 2՝ Սթրեսային իրավիճակների բնութագրերի, դրանց ծագման գործոնների դասակարգումը:** Սթրեսային իրավիճակների բնութագրերը և դասակարգումը: Սթրեսի վերաբերյալ տեսություններ (Հ. Սելյե, ՈՒ. Քեննոն, Լազարուս): Սթրեսային հոգեֆիզիոլոգիական խանգարումներ: **Վերջնարդյունքը՝** կիմանան սթրեսը մեկնաբանող հիմնական տեսությունները: **Թեմա 3՝ Սթրեսային իրավիճակներում հոգեկան առողջության հետազոտման առանձնահատկությունները:** Սթրեսային իրավիճակներում հոգեֆիզիոլոգիական ոլորտներում կատարվող տեղաշարժերի ուսումնասիրման մեթոդները և դրանց առաջադրվող հիմնական պահանջները: Սթրեսային իրավիճակներում հոգեբանական հետազոտական աշխատանքների կազմակերպման պահանջները: Հուզական վիճակների բացահայտման մեթոդներ: Սթրեսային իրավիճակների կանխարգելման և դրանց դիմակայման հիմնական մեթոդները: Հարմարում – հոգեբանական, սոցիալական և ֆիզիոլոգիական մակարդակները: Սթրեսը որպես հարմարողական հակազդում: Անձի անհատական առանձնահատկությունների դերը սթրեսի ապրման և հաղթահարման գործընթացում: **Վերջնարդյունքը՝** կտիրապետեն սթրեսային իրավիճակներում հոգեֆիզիոլոգիական ոլորտներում կատարվող տեղաշարժերի ուսումնասիրման մեթոդներին: **Թեմա 4՝ Սթրեսային իրավիճակներում անձի հոգեկան գործառույթների ձևափոխման, դրանց դրսևորման առանձնահատկությունները** : Անձի հոգեկան կայունության բաղադրամասերը ա/. հոգեբանական կայունության գործոններ, բ/. անձնային գործոններ: Հավատը որպես հոգեբանական կայունության հենք: Հոգեբանական պատրաստության համակարգը (կամային ինքնակարգավորման մեխանիզմները. կամային հատկանիշներ): **Վերջնարդյունքը՝** կկարողանան նկարագրել հոգեկան կայունության բաղադրիչները: **Թեմա 5՝ Սթրեսային իրավիճակներում առաջացող հոգեվիճակների, հոգեկան վնասվածքների և հետվնասվածքային հոգեվիճակների դրսևորման առանձնահատկությունները:** Կենսագործունեության անբարենպաստ պայմաններում հոգեբանական ճգնաժամի առանձնահատկությունները: Հոգեբանական վնասվածք: Տագնապ: Սթրես: Ֆրուստրացիա: Անձի հոգեբանական կառուցվածքը որպես բացասական հոգեվիճակների առաջացման նախապայման: Հոգեծին վիճակներ: Նյարդային համակարգի գործառութային խանգարումներ: Հետվնասվածքային սթրես (ՀՍԽ): ՀՍԽ-ների ախտորոշման չափանիշները: Առաջին հոգեբանական օգնության կազմակերպման առանձնահատկությունները: **Վերջնարդյունքը՝** կբնութագրեն անբարենպաստ պայմաններում հոգեբանական ճգնաժամի

առանձնահատկությունները: **Թեմա 6՝ Սթրեսային իրավիճակներում անձի հոգեվերականգնողական գործընթացի գիտագործնական հիմնադրույթների կիրառման ռազմավարությունը:** Անձի սոցիալ-հոգեբանական հարմարման մեխանիզմները: ՀՄԽ-ների վերականգնման ուղիները: Խմբային հոգեվերականգնողական գործընթացի յուրահատկությունները, կազմակերպման պահանջները: Հոգեկան առողջության վերականգնման պահանջները: Հոգեվերականգնողական հնարքներ, ուսուցման տեխնիկան, կառուցվածքը և բովանդակությունը: Հոգեվերականգնողական համալիրի ազդեցության հոգեֆիզիոլոգիական մեխանիզմները: **Վերջնարդյունքը՝** Կտիրապետեն սթրեսի հաղթահարման հիմնական մեթոդներին:

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 22. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 23. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 24. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H28. Սուիցիդալ վարքի հոգեբանություն** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել սուիցիդալ վարքի հոգեբանության, նրա զարգացման փուլերի, առարկայի, նպատակների, խնդիրների, սկզբունքների, ուղղությունների, ուսումնասիրության մեթոդների, ինչպես նաև ինքնասպանության մեկնաբանման տեսությունների, ինքնասպանության պատճառ հանդիսացող անձնային և իրադրային գործոնների, հոգեբանական հիմքերի օրինաչափությունների մասին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա**

1.1. Սուիցիդոլոգիայի՝ որպես գիտության, ուսումնասիրման առարկան, խնդիրները,

1.2. Սուիցիդալ վարքի դրսևորումները,

1.3. Ինքնասպանության տեսակները մարդկության պատմական զարգացման ընթացքում,

1.4. Սուիցիդի հիմնական առանձնահատկությունները, կառուցվածքը, գործոնները, տիպերը,

1.5. Համաշխարհային կրոնների վերաբերմունքը ինքնասպանության երևույթի նկատմամբ,

**2. կկարողանա** իրականացնել սուիցիդի հոգեբանական վերլուծությունը, անձնային իմաստի բացահայտումը: Սուիցիդենտի հոգեբանական աուտոպսիայի ռետրոսպեկտիվ վերլուծություն, ինչպես նաև ինքնասպանության փորձ կատարած անձանց ուսումնասիրություն: Բնութագրել սուիցիդենտների անձին բնորոշ հոգեբանական որակները: Սուիցիդալ վարքի տիպերը: Մեկնաբանել ինքնասպանության վերաբերյալ վիճակագրական տվյալները: Ուսումնասիրել և հետազոտել՝ սուիցիդենտների թողած նախասուիցիդալ երկտողերը, գրաֆիկական պատկերների առանձնահատկությունները: Կիրառել սուիցիդի կանխարգելման (պրոֆիլակտիկայի) և համապատասխան խմբերի անձանց ռեաբիլիտացիայի և ռեադապտացիայի համար մի շարք տեխնիկաներ:

**3. կտիրապետի** սուիցիդի սոցիալ-հոգեբանական ոչ ախտաբանական բնույթի, ինչպես նաև սահմանային վիճակներով, և գիտակցության, և ուշադրության նեղացմամբ պայմանավորված ինքնասպանությունների հոգեբանական մեխանիզմների բացահայտմանը և նորովի մեկնաբանմանը: Սուիցիդի հիմնահարցի վերլուծությանը փիլիսոփայության, անթրոպոլոգիայի, սոցիոլոգիայի, գենետիկայի, կենսաքիմիայի, էկոլոգիայի, հոգեբուժության և հոգեբանության տեսանկյուններից:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Պատմական ակնարկ ինքնասպանության հիմնահարցի մասին: **Վերջնարդյունքը՝** Կիմանան սուիցիդոլոգիայի՝ որպես գիտության, ուսումնասիրման առարկան, խնդիրները: ***Թեմա 2՝*** Սուիցիդի մեկնաբանումը կրոնների տեսանկյունից: **Վերջնարդյունքը՝** Կիմանան համաշխարհային կրոնների վերաբերմունքը ինքնասպանության երևույթի

նկատմամբ: ***Թեմա 3՝*** Ինքնասպանության քրեաիրավական ասպեկտները: **Վերջնարդյունքը**՝ Կիրականացնեն ուիցիդենտի հոգեբանական աուտոպսիայի ռետրոսպեկտիվ վերլուծություն, ինչպես նաև ինքնասպանության փորձ կատարած անձանց ուսումնասիրություն: ***Թեմա 4՝*** Սուիցիդի բնորոշումը և սուիցիդալ վարքի դրսևորումները: **Վերջնարդյունքը**՝ Կիրականացնեն սուիցիդի հոգեբանական վերլուծություն և դրա անձնային իմաստի բացահայտում: ***Թեմա 5՝*** Ինքնասպանության հիմնահարցի մեկնաբանման տեսությունները: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան սուիցիդալ վարքին նպաստող անձնային և իրադրային գործոնների մասին: ***Թեմա 6՝*** Սուցիդի հոգեբանական վերլուծությունը: **Վերջնարդյունքը**՝ Կկարողանան բնութագրել սուիցիդենտների անձին բնորոշ հոգեբանական որակները: ***Թեմա 7՝*** Սուիցիդը որպես անչափահասների շրջանում շեղվող վարքի դրսևորման ձև: **Վերջնարդյունքը**՝ Կբացահայտեն նչափահասների շրջանում շեղվող վարքի, մասնավորապես՝աուտոագրեսիվ գործողությունների հավանականությունը: ***Թեմա 8՝*** Ինքնասպանի անձին բնորոշ որոշ հոգեբանական որակների մեկնաբանությունը: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան սուիցիդենտների անձին բնորոշ հոգեբանական որակները: ***Թեմա 9՝*** Ինքնասպանության վիճակագրական մեկնաբանությունը: **Վերջնարդյունքը**՝ Կկարողանան մեկնաբանել ինքնասպանության վերաբերյալ վիճակագրական տվյալներ: ***Թեմա 10՝*** Ինքնասպանների գրաֆիկական պատկերների յուրահատկությունները: **Վերջնարդյունքը**՝ Կկարողանան մեկնաբանել սուիցիդենտների գրաֆիկական պատկերների առանձնահատկություններ: ***Թեմա 11՝*** Ինքնասպանների նախասուիցիդալ երկտողերի հոգեբանական մեկնաբանությունը: **Վերջնարդյունքը**՝ Կկարողանան բնութագրել սուիցիդալ վարքի ձևերը: ***Թեմա 12՝*** Սուիցիդի կանխարգելման ուղիները: **Վերջնարդյունքը**՝ Կտիրապետեն սուիցիդալ երկտողերի վերլուծության հմտություններին:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 25. Առաջին միջանկյալ | 0-4 |

| | | |
|---|---|---|
| 26. | Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 27. | Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Համախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

7. ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H29. Մարմնակողմնորոշիչ թերապիա** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ուսանողներին ծանոթացնել մարմնակողմնորոշիչ թերապիայի հիմնական ուղղություններին, աշխատանքի սկզբունքներին և մեթոդներին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանան** ՝ ուսանողները կիմանան մարմնակողմնորոշիչ հոգեթերապիայի հիմնական դրույթները, ժամանակակից մոտեցումները և աշխատանքի սկզբունքները:

2. **Կկարողանան՝** ստացած գիտելիքներն օգտագործել պրակտիկայում;

3. **Կտիրապետեն** ՝ տեսական և գործնական գիտելիքների ու հմտությունների:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1***՝ Ներածություն: Ընդհանուր հասկացություն մարմնակողմնորոշիչ թերապիայի մասին*:* ***Թեմա 2***՝ Մարմնակողմնորոշիչ հոգեթերապիայի առարկան, խնդիրները, կապն այլ գիտությունների հետ; **Վերջնարդյունքը** ՝ Ուսանողները կուսումնասիրեն և կիմանան մարմնակողմնորոշիչ թերապիայի հիմքում ընկած տեսություններն ու մոտեցումները: ***Թեմա 3***՝ Մարմնակողմնորոշիչ թերապիայի աշխատանքի հիմնական խնդիրներն ու սկզբունքները: ***Թեմա 4***՝ Վ. Ռայխ և վեգետոթերապիա: ***Թեմա 5***՝ Ա. Լոուեն և բիոէներգիա: Աշխատանք հենարանների հետ: **Վերջնարդյունքը** ՝ Ուսանողները ձեռք կբերեն հմտություններ հենարանների հետ աշխատանքի: ***Թեմա 6***՝ Մ. Ալեքսանդերի և Մ. Ֆելդենկրայզի տեսությունները և աշխատանքի հիմնական սկզբունքները: ***Թեմա 7***՝ Մարդկանց տիպերն ըստ շնչառության: Շնչառության տիպերն ըստ Կելլեմանի: **Վերջնարդյունքը** ՝ Ուսանողները կկարողանան ըստ շնչառության ախտորոշիչ նյութ ստանալ: ***Թեմա 8***՝ Հիմնական աշխատանքը մկանային և հոգեբանական պատյանների հետ:

**Վերջնարդյունքը** ՝ Ուսանողները կիմանան հիմնական պատյանների հետ աշխատանքի մեթոդները:

**ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 28. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 29. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 30. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

8. **ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H08. Կոգնիտիվ վարքային հոգեթերապիա** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

**Ծրագրի նպատակն** է՝ կոգնիտիվ-վարքաբանական հոգեթերապիայի ոճի յուրացումն է և հիմնարար տեխնիկաների ինքնուրույն կիրառման հմտությունների ձևավորումը:

Դասընթացի արդյունքում ուսանողները ձեռք կբերեն ամբողջական պատկերացում կոգնիտիվ հոգեթերապիայի ոճի և ընթացքի վերաբերյալ, ինքնուրույն կփորձարկեն մի ամբողջ շարք տեխնիկական հնարներ և կկարողանան ինքնուրույն ծրագրել հոգեթերապևտիկ աշխատանքի անհրաժեշտ մարտավարությունները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա**

1.1. Կոգնիտիվ հոգեթերապիայի հիմնական գաղափարները,

1.2. Ա.Բեկի պաթոլոգիկ անձի տեսությունը,

1.3. Հուզական խանգարումների կոգնիտիվ բովանդակությունը,

1.4. Կոգնիտիվ թերապիայի հիմնական ստրատեգիաները, փուլերը և սխեման,

1.5. Մտածողության, վարքի և հուզերի փոխկապակցվածությունը,

1.6. Մտածողության աղճատումները,

1.7. Կոգնիտիվ տեխնիկաներ. Բացերի լրացում, դեկատաստրոֆիզացիա, ռեատրիբուցիա, վերասահմանում, ապակենտրոնացում, վիճարկում, կոգնիտիվ վերակառուցում, տնային աշխատանքներ և այլն,

1.8. Աշխատանք ավտոմատիկ մտքերի հետ,

**2. կկարողանա** բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր տեղեկությունները իրենց գիտելիքների հետ, կունենան անհատական գործունեության ընթացքում կոգնիտիվ ուղղությամբ հոգեթերապևտիկ աշխատանք կատարելու հմտություններ և կարողություններ:

**3. կտիրապետի** հոգեբանական գիտելիքները գործնականում կիրառելու մեթոդներին, կոգնիտիվ տեխնիկաներն արդյունավետ օգտագործելու հնարներին, ինչպես նաև այցելու-հոգեբան հարաբերություններ արդյունավետ կառուցելու հոգեբանական միջոցներին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Կոգնիտիվ հոգեթերապիայի ընդհանուր նկարագրություն: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան կոգնիտիվ հոգեբանության հիմնական գաղափարները և կոգնիտիվ թերապիայի գլխավոր հայեցակետը: ***Թեմա 2՝*** Ա.Էլիսի ներդրումը թերապիայում: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան հուզական խանգարումների կոգնիտիվ բովանդակությունը: ***Թեմա 3՝*** Նևրոտիկի կոդեքս, ադեկվատ-անադեկվատ հույզեր: **Վերջնարդյունքը**՝ Կծանոթանան նևրոտիկի կոդեքսի առանձնահատկություններին: ***Թեմա 4՝*** Ա.Բեկի ներդրումը կոգնիտիվ թերապիայում: **Վերջնարդյունքը**՝ Կմեկնաբանեն A-B-C կոնցեպցիան և ռացիոնալ ու իռացիոնալ մտածողության առանձնահատկությունները: ***Թեմա 5՝*** Կոգնիտիվ հոգեթերապիայի գլխավոր թիրախները: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան հուզական խանգարումների կոգնիտիվ բովանդակությունը: ***Թեմա 6՝*** Տիպական փոխհատուցող ստրատեգիաներ: **Վերջնարդյունքը**՝ Կտիրապետեն մտածողության աղճատումներին: ***Թեմա 7՝*** Անձնային խանգարումներ: **Վերջնարդյունքը**՝ Կտիրապետենմտածողության, վարքի և հուզերի փոխկապակցվածությանը: ***Թեմա 8՝*** Թերապիայի կառուցվածքը և փուլերը: **Վերջնարդյունքը**՝ Կտիրապետեն սառը, զոլ և տաք կոգնիցիաների առանձնահատկություններին: ***Թեմա 9՝*** Կոգնիտիվ հոգեթերապիայի հիմնական տեխնիկաները: **Վերջնարդյունքը**՝ Կկարողանան աշխատել կոգնիտիվ-վարքաբանական տեխնիկաներով: ***Թեմա 10՝*** Էմպաթիա: Ապրումակցում: **Վերջնարդյունքը**՝ Կսովորեն լինել էմպատիկ: ***Թեմա 11՝*** Կոգնիտիվ հոգեթերապաիայի կիրառման առանձնահատկությունները: **Վերջնարդյունքը**՝ Կիրականացնեն կոգնիտիվ-վարքաբանական

թերապիայի հիմնական ստրատեգիաները, փուլերը և սխեման: ***Թեմա 12՝*** Կոգնիտիվ հոգեթերապիայի հիմնական սահմանափակումները: **Վերջնարդյունքը**՝ Կտիրապետեն կոգնիտիվ մոտեցման հնարավորություններին և սահմանափակումներին, ինչպես նաև փոխկապակցվածությանը հոգեթերապևտիկ այլ մոդելների հետ:

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 31. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 32. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 33. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

9. **ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** <u>դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:</u>

**10/H22. Հոգեբանական պրակտիկում** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել կիրառական հոգեբանության, հոգեբանական հետազոտություն անցկացնելու, հոգեբանական մեթոդները և մեթոդիկաները կիրառելու

վերաբերյալ: Ուսուցանել անհատական և խմբային հոգեբանական աշխատանքների յուրահատկություններին ու տեսակներին: Ծանոթացնել հոգեբանական տարբեր մեթոդներին, թերապիաներին, իմացական գործընթացների առանձին հատկությունները բացահայտելուն, հույզերի , անձնային առանձնահատկությունների, «ես»-ի բաղադրիչների բացահայտմանը, անձնային աճին ուղղված տեխնիկաներին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** ժամանակակից հոգեբանության մեթոդները: Կտարբերեն մեթոդ և մեթոդիկա հասկացությունները: Կիմանան հոգեբանակնա խմբային և անհատական աշխատանքների տարբերություններն ու առանձնահատկությունները, մաթեմատիկական որոշ բանաձևերի կիրառում թեստերի արդյունքների վերլուծություններում, հոգեբանության ամենակիրառական թերապևտիկ մեթոդները, անձի վախերի, տագնապայնության հաղթահարման, ինչպես նաև՝ անձի հոգեբանական առանձնահատկությունների բացահայտմանն ուղղված մեթոդները, անձնային աճին միտված թրենինգները:

2. **կկարողանա** բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր ինֆորմացիան իր գիտելիքների հետ, հոգեկանի հատկություններ բացահայտել հոգեբանական մեթոդների կիրառմամբ, կատարել ոչ լայնածավալ գիտահետազոտական աշխատանքներ:

3. **կտիրապետի** հոգեբանական գիտելիքները գործնականում կիրառելու հոգեբանության մեթոդներին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Հոգեկանի ուսումնասիրման մեթոդները. Դիտում, զրույց, գիտափորձ՝ լաբորատոր և բնական, թեստեր, պրոյեկտիվ թեստեր, հարցաթերթ, սոցիոմետրիա, անկախ բնութագրերի մեթոդ, ներդրված էլեկտրոդների մեթոդ: **Վերջնարդյունքը** ՝ Կիմանան՝ հոգեկանի ուսւոմնասիրման ժամանակակից մեթոդները: Կկարողանան՝ ճանաչել մեթոդները և ըստ համապատասխան խնդիրների ընտրություն կատարել:

***Թեմա 2՝*** Կետտելի թեստի ուսումնասիրում: Թեստի անցկացման , բանալու հաշվման առանձնահատկությունը: Մաթեմատիկական գործիքակազմ: Դրա կիրառումը թեստի արդյուները հաշվելիս: Արդյունքները գծապատկերների, հիստոգրամների, նկարների, աղյուսակների միջոցով արտացոլել: Կատարել տվյալներ քանակական և որակական վերլուծություն: **Վերջնարդյունքը** ՝Կիմանան՝ Կետտելի թեստիի անցկացման և բանալու հաշվման բանաձևերը: Կկարողանան՝ կոնկրետ մաթեմատիկական բանաձևերը կիրառել հոգեբանական հետազոտությունների ընթացում:

***Թեմա 3՝*** Հոգեկան գործընթացների բացահայտմանն ուղղված հոգեբանական վարժություններ: Հիշողության տեսակներին և զարգացման ուղղված հոգեբանական մեթոդներ: Մտածողության տեսակների, ձևերին և խոսքի առանձնահատկությունների ճանաչմանը և բացահայտմանն ուղղված հոգեբանական մեթոդներ: Անձի տիպական առանձնահատկություններ: Անձի խառնվածքի, բնավորության, ընդունակությունների ուսումնասիրմանն ուղղված հոգեբանական մեթոդեր: **Վերջնարդյունքը** ՝ Կիմանան՝ Անձի կոգնիտիվ կողմի բացահայտման մեթոդների և մեթոդիկաների առանձնահատկությունները:

Կտիրապետեն՝ Հիշողության, մտածողության, խոսքի առանձնահատկությունների բացահայտման մեթոդներին:
***Թեմա 4՝*** Պրոյեկտիվ մեթոդների քննարկում: Տարբեր թերապիաններրի միջոցով հոգեբանական խնդիրների հաղթահարում: Սթրեսի հաղթահարմանն ուղղված թրենինգ: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան՝ Հոգեբանական խնդիրների թերապիաների մասին: Կկարողանան՝ հոգեբանական թերապիաների, մասնավորապես, սթրեսի հաղթահարման կոնկրետ միջոցի:
***Թեմա 5՝*** Խմբային և անհատական թրենինգ: Խմբային թրենինգի սկզբուներն ու գործառույթները: Խմբային թրենինգի հոգեբանական ներգործության վերլուծություն: Խմբային և անհատական թերապևտիկ աշխատանքների համեմատական վերլուծություն: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան՝ թերապևտիկ անհատական և խմբային աշխատաների մասին գիտական գիտելիք: Կկարողանան՝ վերլուծել խմբային և անհատական աշխատանքների անցկացման առանձնահատկություններն՝ ըստ խնդրի:

**ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 34. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 35. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 36. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

10. ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H11. Հոգեբանական հետազոտության մեթոդաբանություն** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է՝ ընդլայնել ուսանողների մասնագիտական գիտելիքների շրջանակը՝ մասնավորապես հոգեբանական հետազոտության իրականացման մեթոդաբանական հիմքերի, մեթոդների կիրառելիության և վալիդության հիմնադրույթների վերաբերյալ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

2. **Կիմանա**

- բնութագրել փորձարարական մեթոդները հոգեբանական հետազոտության մեջ
- իրականացնել տիպաբանության մշակում հոգեբանական հետազոտության մեջ:

3. **Կկարողանա**

- *սահմանել հոգեբանական հետազոտության օբյեկտը և առարկան,*
- *ձևակերպել հոգեբանակա և հետազոտության վարկածը,*
- *տիրապետելու հոգեբանական հետազոտության իրականացման տարբեր մեթոդներին,*
- *Իրականացնելու տվյալների համեմատական վերլուծություն,*
- *Պլանավորելու փորձարարական հետազոտության ընթացքը,*
- *տարբերակելու մեթոդների կիրառելիության մեխանիզմները ըստ հետազոտության նպատակների:*

4. **Կտիրապետի**

- *հոգեբանական հետազոտության կառուցվածքային բաղադրիչներին*
- *հետազոտության մեթոդաբանական հիմքերը*
- *ներկայացնելու հոգեբանական հետազոտության մեթոդների դասակարգմանը*
- *հոգեբանական երևույթները հոգեբանական հետազոտության մեջ բնութագրելու մեթոդներին, մեթոդիկաները մեթոդաբանության ընդհանուր համակարգում*

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Հոգեբանական հետազոտության մեթոդաբանական հիմքերը: **Վերջնարդյունքը՝** ուսանողը ունակ կլինի՝ վերլուծելու հետազոտության կառուցվածքային բաղադրիչները, ներկայացնելու հետազոտության մեթոդաբանական հիմքերը, բնութագրելու մեթոդները, մեթոդիկաները մեթոդաբանության ընդհանուր համակարգում: **Թեմա 2՝** Մեթոդաբանական սկզբունքների սահմանումը: **Վերջնարդյունքը՝** ուսանողը ունակ կլինի՝ ներկայացնելու հոգեբանական հետազոտության

իրականացման սկզբունքները, կատարելու հոգեբանական հետազոտության մեթոդների դասակարգումը, տարբերակելու մեթոդների կրառելիության մեխանիզմները ըստ հետազոտության սկզբունքների: **Թեմա 3՝** Մեթոդների, մեթոդիկաների բնութագրումը մեթոդաբանության ընդհանուր համակարգում: **Վերջնարդյունքը՝** ուսանողը ունակ կլինի՝ տարբերակելու մեթոդներն ու մեթոդիկաները մեթոդաբանության ընդհանուր համակարգում, տիրապետելու հոգեբանական հետազոտության իրականացման տարբեր մեթոդներին, իրականացնելու տվյալների համեմատական վերլուծություն: **Թեմա 4՝** Հոգեբանական հետազոտության օբյեկտի և առարկայի սահմանումը: **Վերջնարդյունքը՝** ուսանողը ունակ կլինի՝ սահմանելու հոգեբանական հետազոտության օբյեկտը և առարկան, ձևակերպելու հոգեբանական հետազոտության վարկածը, պլանավորելու փորձարարական հետազոտության ընթացքն ըստ սահմանված օբյեկտի և առարկայի: **Թեմա 5՝** Հոգեբանական երևույթների բնութագրումը հոգեբանական հետազոտության մեջ: **Վերջնարդյունքը՝** ուսանողը ունակ կլինի՝ բնութագրելու փորձարարական մեթոդները հոգեբանական հետազոտության մեջ, իրականացնելու տիպաբանության մշակում հոգեբանական հետազոտության մեջ, բնութագրելու հոգեբանական երևույթները հոգեբանական հետազոտության արդյունքներով:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 37. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 38. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 39. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

11. ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H18. Նեյրոլեզվաբանական ծրագրավորում** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Ծրագրի նպատակն** է՝ծրագրում տրվում են ՆԼԾ-ի հիմնական հասկացությունները և տեխնիկաները, որոնք ներկայացված են ձևափոխումների 3 ձևով՝ խարիսխավորումների, ենթամոդալական և ռեֆրեյմինգային փոփոխություններով. Դասընթացի ծրագիրը նախատեսված է ձևավորել ուսանողների մոտ հմտություններ, որոնք անհրաժեշտ են բացասական էմոցիաների և ոչ արդյունավետ վարքի հետ կատարելու հոգեբանական շտկման աշխատանքներ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** նեյրոլեզվաբանական ծրագրավորման տեսության և պրակտիկայի հիմնական դրույթները,

**2. կկարողանա**

2.1. Կիրառել ստացված գիտելիքները՝ նպատակ ունենալով զարգացնել զգայողականությունը մարդու կողմից օգտագործվող լեզվաբանական և ոչ վերբալ կարծրատիպերի նկատմամբ,

2.2. Օգտագործել ստացված գիտելիքները՝ սեփական կամ ուրիշ մարդկանց հոգեբանական խնդիրները լուծելու նպատակով,

**3. կտիրապետի**

3.1. Ինքնակառավարման հմտություններին,

3.2. Փոփոխություններ կատարելու հմտություններին,

3.3. Մարդու տարբեր հոգեբանական որակները կատարելագործելու հմտություններին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** ՆԼԾ-ի ծագման պատմությունը: Աշխարհի մոդելներ: **Վերջնարդյունքը՝** Պատկերացում կազնել ՆԼԾ-Ի առաջացման եվ զարգացման մասին: Աշխարհի մոդելի բովանդակությունկ եվ ձւավորումը: ***Թեմա 2՝*** Մետամոդել: **Վերջնարդյունքը՝** Ծանոթանալ միամշան ինֆորմացիա ստանալու հարցերի հետ: Կարողանալ օգտագոռծել մետամոդելի հարցոռը: ***Թեմա 3՝*** Ռապորտի հաստատումը: **Վերջնարդյունքը՝** Ծանոթանալ և կարողանալ օգտագօրծել վստահության մթնոլորդ ստեղծելու մեթոդները: ***Թեմա 4՝*** Լավ ձևակերպված արդյունքի պայմանները: **Վերջնարդյունքը՝** Պատկեռացում կազմել լավ արդյունքի մասին և կարողանալ այն ձևակերպել; ***Թեմա 5՝*** Խարիսխավորում: **Վերջնարդյունքը՝** Կարողանալ օգտագործել խարիսխները բացասական զգացմունքնեռը վերացնելու համար: ***Թեմա 6*** Անձնային պատմության փոփոխություն: **Վերջնարդյունքը՝** Կարողանալ օգտագոռծել խարիսխնոռը կյանքի պատմությունը խմբագրելու համար: ***Թեմա 7՝*** Վիզուալ-կինեստետիկ դիսոցիացիա: **Վերջնարդյունքը՝** Օգտագոռծել այդ նեէոդը բացասական զգացմունքնեռը վեռացնելու համար: ***Թեմա 8՝***

Ռեֆրեյմինգային տեխնիկաներ: **Վերջնարդյունքը՝** Ունենալ պատկերացում ռեֆրեյմինգի տեսակների մասին և կարողանալ օգտագործել ոչարդյունավետ վարգը շտկելու նպատակով: **Թեմա 9՝** Ենթամոդալական խմբագրում: **Վերջնարդյունքը՝** Ունենալ պատկերացում ենթամոդալականոըթյունների մասին և լարողանալ օգտագործել փոփոխությունները կատառեու համար: **Թեմա 10՝** Ֆոբիաների հետ աշխատելու տեխնիկա: **Վերջնարդյունքը՝** Կարողանալ կիռարել այս մեթոդը վախերի և ֆոբիանեռը հետ աշխատելու ժամանակ:

### ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 40. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 41. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 42. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

### ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

**ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H14. Միջանձնային հարաբերությունների և բանակցությունների վարման հոգեբանություն** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել միջանձնային հարաբերությունների և բանակցությունների վարման հոգեբանական առանձնահատկություններին, առարկայի, նպատակների, խնդիրների, ուսումնասիրության մեթոդների և տեխնիկաների մասին:

Ծրագիրն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական գիտելիքներ ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև իր միջանձնային հարաբերությունների և բանակցությունների վարման ոլորտի գործունեության ընթացքում անհրաժեշտ սոցիալ-հոգեբանական տեխնիկաների և տեխնոլոգիաների գործնական կիրառման վերաբերյալ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** միջանձնային հարաբերությունների և բանակցությունների վարման հատկությունների, անձնավորության տարբեր կառույցների զարգացման մեխանիզմները, վարքի կարգավորման տարբեր հնարները:

2. **կկարողանա** ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր տեղեկությունները իրենց գիտելիքների հետ, կունենան անհատական գործունեության ընթացքում միջանձնային հարաբերությունների և բանակցությունների վարման առանձնահատկություններն ուսումնասիրելու հմտություններ և կարողություններ:

3. **կտիրապետի** միջանձնային հարաբերությունների և բանակցությունների վարման գիտելիքները գործնականում կիրառելու մեթոդներին, հասարակական ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորման, ուսման, դաստիարակության, աշխատանքային գործունեության արդյունավետության բարձրացման հոգեբանական միջոցներին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Ընդհանուր գաղափար միջանձնային հարաբերությունների մասին: **Վերջնարդյունքը՝** Կտիրապետի միջանձնային հարաբերությունների մասին ընդհանուր գաղափարին: ***Թեմա 2՝*** Միջանձնային հարաբերությունների դերն ու նշանակությունը ժամանակակից կյանքում, գործառույթները: **Վերջնարդյունքը՝** Կիմանա միջանձնային հարաբերությունների դերի և նշանակության մասին, կտիրապետի դրանց գործառույթներին: ***Թեմա 3՝*** Բանակցելու տեխնոլոգիաների կիրառման խնդիրները: **Վերջնարդյունքը՝** Կտիրապետի բանակցելու տեխնոլոգիաների կիրառման խնդիրներին: ***Թեմա 4՝*** Միջանձնային հարաբերությունների ժամանակակից դասակարգումը: **Վերջնարդյունքը՝** Կտիրապետի միջանձնային հարաբերությունների ժամանակակից դասակարգմանը: ***Թեմա 5՝*** Ընդհանուր գաղափար բանակցությունների մասին: **Վերջնարդյունքը՝** Կտիրապետի բանակցությունների մասին ընդհանուր գաղափարին: ***Թեմա 6՝*** Բանակցությունների տեսակները և վարման ռազմավարությունները: **Վերջնարդյունքը՝** Կկարողանա տարբերակել բանակցությունների տեսակները և կտիրապետի վարման ռազմավարություններին: ***Թեմա 7՝*** Բանակցությունների վարման ազգային առանձնահատկությունները

**Վերջնարդյունքը՝** Կտիրապետի բանակցությունների վարման ազգային առանձնահատկություններին:

### ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 43. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 44. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 45. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

### ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

12. **ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H16. Արտ-թերապիա** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ Ուսանողներին ծանոթացնել արտ-թերապիայի հիմնական մոտեցումների ու տեսությունների հետ: Դասընթացի արդյունքում ուսանողները ձեռք կբերեն ամբողջական պատկերացում արտ-թերապիայի ոճի և ընթացքի վերաբերյալ, ինքնուրույն կփորձարկեն մի ամբողջ շարք տեխնիկական հնարներ և կկարողանան

ինքնուրույն ծրագրել հոգեթերապևտիկ աշխատանքի անհրաժեշտ մարտավարությունները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա**

1.1. Արտ-թերապիայի հիմնական գաղափարները,

1.2. Արտ-թերապիայի կիրառման առանձնահատկությունները,

**2. կկարողանա** բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր տեղեկությունները իրենց գիտելիքների հետ, կունենան անհատական գործունեության ընթացքում արտ-թերապևտիկ աշխատանք կատարելու հմտություններ և կարողություններ:

**3. կտիրապետի** հոգեբանական գիտելիքները գործնականում կիրառելու մեթոդներին, արտ-թերապևտիկ տեխնիկաները արդյունավետ օգտագործելու հնարներին, ինչպես նաև այցելու-հոգեբան հարաբերություններ արդյունավետ կառուցելու հոգեբանական միջոցներին:

**Բովանդակություն.**

***Թեմա 1՝*** Արտ-թերապևտիկ աշխատանքի յուրահատկությունները: **Վերջնարդյունքը՝** Ուսանողը կուսումնասիրի արտ-թերապիա մեթոդի առանձնահատկությունները և տարբերությունը թերապևտիկ այլ ուղղություններից: ***Թեմա 2՝*** Արտ-թերապիայի հիմնական ուղղությունները: **Վերջնարդյունքը՝** Ուսանողը կիմանա արտ-թերապիայի պատմությունը և տեսական հիմքերը : ***Թեմա 3՝*** Արտ-թերապիայի տեսակները;Նյութերն արտ-ում: **Վերջնարդյունքը՝** Ուսանողը կհասկանա, թե ինչ ներդրում ունեն հոգեբանության երկու հզոր ուղղություններն արտ-թերապիայի կայացման գործում: ***Թեմա 4՝*** Սիմվոլի նշանակությունն արտ-թերապիայում: **Վերջնարդյունքը՝** Ուսանողը կտիրապետի սիմվոլների մակարդակներին;Կտիրապետի արքետիպային սիմվոլներին մեկնաբանությանը: ***Թեմա 5՝*** Հոգեթերապևտիկ հարաբերություններն արտ-թերապիայում: **Վերջնարդյունքը՝** Ուսանողները կծանոթանան հումանիստական և էքզիստենցիալ արտ-թերապիայի հիմնական սկզբունքներին և տեխնիկաներին: ***Թեմա 6՝*** Անհատական և խմբային արտ-թերապիա: **Վերջնարդյունքը՝** Ուսանողները կտիրապետեն նկարչաթերապիայի տեխնիկաներին: ***Թեմա 7՝*** Արտ-թերապևտիկ աշխատանքի փուլերը: **Վերջնարդյունքը՝** Ուսանողներն ամբողջական պատկերացում կկազմեն արտ-թերապիա մեթոդի վերաբերյալ և կտիրապետեն որոշակի հմտությունների՝ տեխնիկաներով աշխատելու համար:

**ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,

- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 46. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 47. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 48. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

**ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H15. Շտկողական հոգեբանություն** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել շտկողական հոգեբանության, ոլորտին վերաբերվող հոգեբանական տեխնոլոգիաների առանձնահատկությունների, առարկայի, նպատակների, խնդիրների, ուսումնասիրության մեթոդների և տեխնիկաների մասին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** շտկողական հոգեբանության հիմնական տեխնիկաների մեխանիզմները, վարքի կարգավորման տարբեր հնարները:
2. **կկարողանա** ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր տեղեկությունները իրենց գիտելիքների հետ, կունենան անհատական գործունեության ընթացքում գործնական հմտություններ և կարողություններ:
3. **կտիրապետի** շտկողական հոգեբանության գիտելիքները գործնականում կիրառելու մեթոդներին, հոգեբանական աշխատանքի գործունեության արդյունավետության բարձրացման հոգեբանական միջոցներին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Շտկողական հոգեբանության հիմունքները: Շտկողական հոգեբանության օրինաչափությունների փոխադարձ կապը և փոխներգործությունը: Հասկացողություն Շտկման, հոգեկարգավորման, հոգեթերապևտիկ գործընթացի մասին: Հոգեթերապիայի հիմնական ուղղությունները: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ շտկման հոգեբանության հիմունքները, կկարողանան՝ իրականացնել հոգեաշտկող աշխատանքներ:

***Թեմա 2՝*** Շտկողական հոգեբանության փուլերը: Առաջին այց, հոգեախտորոշում, խնդրի ձևակերպում, ռապորտի հաստատում, շտկման տեխնիկաներ: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ Խնդրի ձևակերպման առանձնահատկությունները: Կկարողանան՝ իրականացնել առաջին այց, խնդիր ձևակերպել: Կտիրապետեն՝ գործնական հմտությունների հոգեշտկման ոլորտում:

***Թեմա 3՝ Հետտրավմատիկ սթրեսային խանգարում, դեբրիֆինգ***

✓ Ծանոթացնել թեմայի տեսական հիմունքներին:

✓ Հաղորդել գիտելիքներ հետտտրավմատիկ սթրեսային խանգարման մեխանիզմների, գործընթացին բնորոշ հոգեբանական խնդիրների և նրանց հաղթահարման հոգեբանական տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ:

✓ Ձևավորել հմտություններ և կարողություններ այդ շտկողական տեխնիկաներով /դեբրիֆինգի/ ինքնուրույն աշխատելու գործընթացում:

**Վերջնարդյունքը՝** Կիմանան Դեբրիֆինգի հիմնական տեխնիկաների մեխանիզմները, վարքի կարգավորման տարբեր հնարները: Կկարողանան Ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր տեղեկությունները իրենց գիտելիքների հետ, կունենան անհատական գործունեության ընթացքում գործնական հմտություններ և կարողություններ: Կտիրապետեն Դեբրիֆինգի գործնականում կիրառելու մեթոդներին, հոգեբանական աշխատանքի գործունեության արդյունավետության բարձրացման հոգեբանական միջոցներին:

***Թեմա 4՝*** Հիվանդությունների դասակարգման միջազգային չափանիշների հետ ծանոթացում: Ախտանիշների նկարագիր: Աշխատանիշների համակարգում: Հարակից ոլորտի մասնագետների հետ համատեղ աշխատանք: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ շտկման հոգեբանությանխնդիրները, փուլերը, կկարողանան՝ իրականացնել առանձին մարդկանց հոգեբանական խնդիրների նկարագիր և դասակարգում:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,

- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 49. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 50. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 51. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

13. **ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H04. Միջմշակութային հոգեբանություն** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.** ուսումնասիրել միջմշակութային հոգեբանության հիմնադրույթները և ուսումնասիրման մեթոդաբանությունը:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանա՝**

- Միջմշակութային հոգեբանության առարկան, նպատակը, խնդիրները, առարկայի տեղը հոգեբանական գիտակարգում, կապն այլ գիտությունների հետ,
- Միջմշակութային հոգեբանության շրջանակներում հոգեբանական հետազոտության կազմակերպման մեթոդաբանական հիմունքները,
- Միջմշակութային հոգեբանության զարգազման օրինաչափությունները,
- Ժամանակակից հասարակություններում սոցիալ-հոգեբանական խնդիրների բացահայտման և վերլուծման միջմշակութային առանձնահատկությունները:

**2. Կկարողանա՝**

- Ներկայացնել միջմշակութային հոգեբանական գիտության զարգացման պատմությունը, հիմնական տեսական մոտեցումներն ու ուղղությունները, միջգիտական կապերը, արդի հիմնախնդիրները, հիմնարար և

կիրառական բնագավառները,
- Բնութագրել անձի վարքագծի և գործունեության օրինաչափությունները, որոնք պայմանավորված են հասարակությունում անձի փոխհարաբերություններով,
- Ներկայացնել *մշակութային սինդրոմ* հասկացությունը սոցիալական հոգեբանության մեջ,
- Իրականացնել տարբեր մշակույթներում անձի գործունեության և հաղորդակցման վերաբերյալ համապատասխան մեթոդաբանական մոտեցումները,

**3. Կտիրապետեն՝**
- Միջմշակութային հոգեբանության տեսական հիմնահարցերին,
- Միջմշակութային հոգեբանական հետազոտության կազմակերպման գործընթացներին,
- Միջանձնային փոխհարաբերությունների պրակտիկ հետազոտման ընթացքում միջմշակութային հոգեբանական մեթոդաբանությանը:

**Բովանդակությունը.**

- **Թեմա 1՝** միջմշակութային հոգեբանության առարկան, խնդիրները: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ միջմշակութային հոգեբանություն առարկան, նպատակը, խնդիրները, առարկայի տեղը հոգեբանական գիտակարգում, կապն այլ գիտությունների հետ: Կկարողանան՝ գնահատել միջմշակութային հոգեբանության կայացման արդի գործընթացները և զարգացման հեռանկարները: **Թեմա 2՝** սոցիալական հոգեբանությունը և աշխարհում գլոբալիզացիայի դրսեվորումները: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ : Սոցիալ-հոգեբանությայն դերը գլոբալիզացիայի տարբեր դրսևորումների ներքո: Կկարողանան՝ գնահատել գլոբալիզացիոն գործընթացների ուսումնասիրման միջմշակութային առանձնահատկությունները:
- **Թեմա 3՝** միջմշակութային վերլուծության անհատական մակարդակը հոգեբանության մեջ: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ Եսակենտրոն և այլակենտրոն անձանց բնութագրումը միջ-մշակութային համատեքստում:
- Կտիրապետեն՝ միջոցների և պարգևների բաշխման վերաբերյալ պատկերացումներին եսակենտրոն և այլակենտրոն անձանց մոտ: **Թեմա 4՝** մշակույթի ուսումնասիրման հոգեբանական մոտեցումները: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ *Մշակույթի սինդրոմ* եզրույթը սոցիալական հոգեբանության մեջ: Կկարողանան՝ բնութագրել անհատական և կոլեկտիվ մշակույթների տեսակները հոգեբանության մեջ: **Թեմա 5՝** սոցիալական հոգեբանության և մշակույթի կապն արտահայտող մեթոդաբանական սկզբունքները: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ սոցիալ-հոգեբանական հետազոտության մեթոդաբանական սկզբունքների կապը մշակույթի հետ:
- Կտիրապետեն՝ Ընտրանքի ձևավորման և ընդլայնման մեխանիզմները միջ-մշակութային հոգեբանության մեջ: **Թեմա 6՝** միջմշակութային հոգեբանական հետազոտությունների մեթոդաբանական վերլուծություններ: **Վերջնարդյունքը՝**

Կկարողանան՝ բնութագրել միջ-մշակութային հոգեբանության մեթոդաբանական գործիքակազմի ազդեցությունը կլինիկական հոգեբանական ախտորոշման վրա և միջ-մշակութային հոգեբանական հետազոտությունների գենդերային և տարիքային դրսևորումները: Կտիրապետեն՝ բարեկեցության և կաշառակերության մասին հոգեբանական վերլուծությունների միջմշակութային ասպեկտներին:

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 52. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 53. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 54. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

14. **ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H19. Հոգեկարգավորում** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.** հոգեբանության բնագավառի ապագա մասնագետների մեջ ձևավորել հոգեկարգավորում իրականացնելու գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանա**

- Անձի հոգեկարգավորման վերաբերյալ տարբեր մոտեցումները
- Հոգեբանանական տարբեր տեսությունների գործնական մեթոդները

2. **Կկարողանա**

- Յոգեբանական վերլուծության ենթարկել այցելուի անձի հոգեբանական խնդիրները, դրանց հոգեբանական առանձնահատկությունները,
- շտկողական աշխատանքներ իրականացնել տարբեր հոգեբանական ուղղությունների կողմից առաջարկվող մեթոդներով՝ ըստ խնդրի առանձնահատկության:

- խնդրի հոգեբանական ախտորոշում և վերլուծություն իրականացնելու հնարներին

3. **Կտիրապետի**

- թերապևտիկ աշխատանքներ իրականացնելու գործիքակազմին
- խնդիրների պատճառականությունը հասկանալու, տարբեր ախտանշանների միջև կապեր հաստատելու կարողությանը

**Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ Հոգեկարգավորման առարկան և խնդիրները: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան՝ հոգեկարգավորման առարկան և խնդիրները: Կկարողանան՝ հասկանալ հոգեկարգավորում, հոգեշտկում, հոգեթերապևտիկ աշխատանքների տարբերությունները: **Թեմա 2**՝ Յոգեկարգավորման ձևավորման և զարգացման պատմական ակնարկ: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան՝ հոգեկարգավորման ձևավորման և զարգացման պատմական ակնարկը: Կկարողանան՝ հասկանալ ժամանակակից մեթոդների հիմքերն ու մեխանիզմները: **Թեմա 3**՝ Յոգեկարգավորման հոգեվերլուծական մոտեցումները: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան՝ հոգեկարգավորման հոգեվերլուծական մոտեցումները: Կկարողանան՝ կիրառել հոգեվերլուծական մեթոդը այցելուների հետ աշխատանքում: **Թեմա 4**՝ Է. Բեռնի «Տրանսակտային վերլուծությունը»: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան՝ Է. Բեռնի մեթոդը: Կկարողանան՝ կիրառել տրանզակտային վերլուծության մեթոդը թերապևտիկ նպատակով: **Թեմա 5**՝ Բիհեյվիորալ /վարքաբանական/ թերապիա: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան՝ բիհևյորալ թերապիայի տեսական մոտեցումները: Կկարողանան՝ կիրառել բիհևյորալ թերապիան: **Թեմա 6**՝ էքզիստենցիալ հոգեթերապիա: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան՝ էքզիստենցյալ թերապիայի տեսական մոտեցումները: Կկարողանան՝ կիրառել էքզիստենցիալլ թերապիան: **Թեմա 7**՝ Վ. Ֆրանկլի

լոգոթերապիաՆ: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ Լոգոթերապիայի տեսական մոտեցումները: Կկարողանան՝ կիրառել լոգոթերապիան: **Թեմա 8՝** Խմբային թերապիա: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ խմբային աշխատանքի հոգեբանական առանձնահատկությունները: Կկարողանան՝ վարել թրեյնինգներ: **Թեմա 9՝** Ռացիոնալ-հուզական հոգեթերապիա: Ա. Էլլիս, Կոգնիտիվ թերապիա. Ա. Բեկ: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ Ռացիոնալ-Հուզական թերապիայի տեսական մոտեցումները: Կկարողանան՝ կիրառել կոգնիտիվ թերապիան իրենց աշխատանքներում: **Թեմա 10՝** Յոգեդրամմա: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ հոգեդրամմայի տեսական հիմքերը: Կկարողանան՝ կիրառել հոգեդրամմայի մեթոդը թերապևտի աշխատանքներում:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 55. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 56. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 57. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

15. **ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** <u>դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:</u>

**10/H25. Գեշտալտ թերապիա** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է՝ հոգեբանության բնագավառի ապագա մասնագետների մեջ ձևավորել գեշտալտ թերապիա իրականացնելու գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** գեշտալտ հոգեբանության, թերապիայի հիմնական դրույթները, մոտեցումները, ձևավորման և զարգացման ընթացքը, գեշտալտ ուղղության տեսական և գործնական մոտեցումները:

2. **կկարողանա** հոգեբանական վերլուծության ենթարկել այցելուի անձի հոգեբանական խնդիրները, դրանց հոգեբանական առանձնահատկությունները, ինչպես նաև շտկողական աշխատանքներ իրականացնել գեշտալտ թերապիայի տարբեր մեթոդների օգնությամբ՝ ըստ խնդրի առանձնահատկության:

3. **կտիրապետի** գեշտալտ թերապիայի տարբեր մեթոդների վերլուծությանը, ներկայացմանը և դրանց կիրառմանը մասնագիտական ոլորտներում

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Գեշտալտ թերապիայի պատմությունն ու զարգացումը: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ գեշտալտ հոգեբանության և թերապիայի պատմական զարգացման ընթացքը, դրանց նմանություններն ու տարբերությունները: Կկարողանան՝ գնահատել թերապևտիկ տարբեր դպրոցների նմանություններն ու տարբերությունները, զարգացման դինամիկան: ***Թեմա 2՝*** Գեշտալտ թերապիայի հիմնական հասկացությունները: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ գեշտալտ թերապիայի հիմնական հասկացությունները: Կկարողանան՝ գնահատել և ախտորոշել տարբեր տեսակի հոգեբանական խնդիրները, ինչպես նաև իրականացնել այդ խնդիրների ուղղման աշխատանքներ: ***Թեմա 3՝*** Նևրոզի, փսիխոզի և այլ խանգարումների մեկնաբանումը գեշտալտ թերապիայում: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ նևրոզ, փսիխոզ և այլ տեսակի խանգարումների գեշտալտ մեկնաբանությունը: Կկարողանան՝ ախտորոշել տարբեր տեսակի խանգարումներ և իրականացնել գեշտալտ թերապիա այդ խանգարումները շտկելու ուղղությամբ: ***Թեմա 4՝*** Թերապևտիկ գործընթացները գեշտալտ թերապիայում: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ գեշտալտ թերապիայի խմբային աշխատանքի և թերապևտիկ գործընթացների առանձնահատկությունները: Կկարողանան՝ ախտորոշել տարբեր տեսակի պաշտպանական մեխանիզմներ և իրականացնել դրանց կարգավորման թերապևտիկ աշխատանքներ: ***Թեմա 5՝*** Գեշտալտ թերապիայի տեխնիկաները և մեթոդները: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ գեշտալտ թերապիայի մի շարք մեթոդներ և հնարներ: Կկարողանան՝ կիրառել գեշտալտ թերապիայի մի շարք մեթոդներ և հնարներ: ***Թեմա 6՝*** Աշխատանք երազների հետ: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ երազների հոգեբանական բնութագրի գեշտալտ մոտեցումը: Կկարողանան՝ վերլուծել և հանգուցալուծել այցելուի երազները: ***Թեմա 7՝*** Գեշտալտ թերապիայի կիրառության ոլորտները: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ թե գեշտալտ թերապիան որ խնդիրների դեպքում է արդյունավետ աշխատում:

Կկարողանան՝ կիրառել թերապևտիկ հնարները հոգեբանական տարբեր խնդիրներ հանգուցալուծելու համար:

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 58. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 59. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 60. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H17. Քաղաքական հոգեբանություն** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Ծրագրի նպատակն** է՝ ուսումնասիրել քաղաքական սոցիալականացման հետ կապված քաղաքական և սոցիալական հոգեբանության մեջ առկա հայտնի հայեցակարգերն ու տեսակետները, ինչպես նաև ուսումնասիրել անձի սոցիալականացման առանձնահատկությունները խմբերում, նաև՝ դիրք, իշխանություն, հեղինակություն և սոցիալական շարժունության տեսակները: Նպաստել ուսանողների մոտ անձի □գերսոցիալականացում□ և □թեւսոցիալականա-

ցում□ հասկացությունների շուրջ գիտական քննարկումներ կազմակերպելու ունակություններ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** ուսումնասիրել քաղաքական գործչի իմիջը, ինքնաներկայացման խոսքային և ոչ խոսքային միջոցները, առաջին տպավորության, ներգործության հոգեբանական մեխանիզմները, որն էլ հնարավորություն կտա ապագա մասնագետ հոգեբանին քաղաքական գործչին ավելի խորը ճանաչելուն:

2. **կկարողանա** բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր տեղեկությունները իրենց գիտելիքների հետ, կունենան անհատական գործունեության ընթացքում քաղաքական հոգեբանության ոլորտում ուսումնասիրություններ և հոգեբանական աշխատանք կատարելու հմտություններ և կարողություններ:

3. **կտիրապետի** հոգեբանական գիտելիքները գործնականում կիրառելու մեթոդներին, քաղաքական սոցիալականացման հետ կապված քաղաքական և սոցիալական հոգեբանության մեջ առկա հայտնի հայեցակարգերին ու տեսակետներին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Անձի հոգեբանական բնութագիրը: Անձի սոցիալականացումը խմբերում: Քաղաքական հոգեբանության առարկան, խնդիրներն ու նպատակները: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ քաղաքականհոգեբանության, որպես գիտական ուղղություն առարկան, խնդիրներն ու նպատակները: Անձի սոցիալականացման հոգեբանական առանձնահատկությունները սոցիալ- քաղաքական հարաբերություններում: Կկարողանան՝ վերլուծել անձին քաղաքական հոգեբանության շարջանակներում: ***Թեմա 2՝*** Պրոֆեսոգրամմա և հոգեգրամա Արդյունավետ ղեկավարի հոգեգրաման: Քաղաքական գորչի անհատական տիպական առանձնահատկությունները: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ պրոֆեսոգրամայի, հոգեգրամայի, մասնագիտական հոգեբանական կողմնորոշման և հոգեբանական ընտրության գիտական գիտելիքի մասին: Կկարողանան՝ կազմել քաղաքական գործչի գործունեության արդյունավետությունն ապահովող հոգեբանական առանձնահատկությունների համախումբը՝ հոգեգրաման: ***Թեմա 3՝*** Քաղաքական գործիչ-հասարակություն փոխհարաբերությունների հոգեբանական կողմը: Կոնֆլիկտ և հակասություն: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ Քաղաքական գործչի շփման, հաղորդակցման առանձնահատկությունների հոգեբանական կողմը, կոնֆլիկտի հակասության հոգեբենական սահմանումները, առանձնահատկությունները: Կտիրապետեն՝ Քաղաքական գործչի շփման, առանձնահատկության ապահովման հոգեբանական նախադրյալների իմացությանը և քաղաքական կոնֆլիկտի հարթման հոգեբանական մեխանիզմներին: ***Թեմա 4՝*** Սոցիալական դիրք, դեր և դերակատարման հարմարվողական գործառույթներ: Քաղաքական ինքնագիտակցություն: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ Քաղաքական անձի սոցիալական դիրքից ածանցված, նաև քաղաքական ինքնա գիտակցության հոգեբանական առանձնահատկությունները: Կկարողանան՝ վերլուծել և ներկայացնել քաղաքական գիտակցության, ենթագիտակցության հոգեբանական առանձնահատկությունները: ***Թեմա 5՝*** Քաղաքական լիդերություն:

Քաղաքական լիդերի հոգեբանություն: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ - քաղաքական լիդերության հոգեբանական հայեցակարգերն ու գիտական մեկնաբանությունները, նաև պոթոլոգիական կողմը: Կտիրապետեն՝ վերլուծել և ներկայացնել քաղաքական գործչի , որպես լիդերի, հոգեբանական բնութագր: ***Թեմա 6՝*** Քաղաքական գոծչի իմիջի հոգեբանական կողմը: Քաղաքական գովազդ: **Վերջնարդյունքը՝** Կկարողանան՝ հասկանալ Քաղաքական գովազդի, քաղաքական գործչի ինքնագովազդի, ինքնաներկայացման և իմիջի հոգեբանությունը: Կտիրապետեն՝ Քաղաքական գործչի իմիջի և ինքնաներկայացման հոգեբանական մեխանիզմներին:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 61. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 62. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 63. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

16. **ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** <u>դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:</u>

**10/H22. Հոգեբանական պրակտիկում** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել կիրառական հոգեբանության, հոգեբանական հետազոտություն անցկացնելու, հոգեբանական մեթոդները և մեթոդիկաները կիրառելու վերաբերյալ: Ուսուցանել անհատական և խմբային հոգեբանական աշխատանքների յուրահատկություններին ու տեսակներին: Ծանոթացնել հոգեբանական տարբեր մեթոդներին, թերապիաներին, իմացական գործընթացների առանձին հատկությունները բացահայտելուն, հույզերի , անձնային առանձնահատկությունների, «ես»-ի բաղադրիչների բացահայտմանը, անձնային աճին ուղղված տեխնիկաներին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** ժամանակակից հոգեբանության մեթոդները: Կտարբերեն մեթոդ և մեթոդիկա հասկացությունները: Կիմանան հոգեբանական խմբային և անհատական աշխատանքների տարբերություններն ու առանձնահատկությունները, մաթեմատիկական որոշ բանաձևերի կիրառում թեստերի արդյունքների վերլուծություններում, հոգեբանության ամենակիրառական թերապևտիկ մեթոդները, անձի վախերի, տագնապայնության հաղթահարման, ինչպես նաև՝ անձի հոգեբանական առանձնահատկությունների բացահայտմանն ուղղված մեթոդները, անձնային աճին միտված թրենինգները:

**2. կկարողանա** բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր ինֆորմացիան իր գիտելիքների հետ, հոգեկանի հատկություններ բացահայտել հոգեբանական մեթոդների կիրառմամբ, կատարել ոչ լայնածավալ գիտահետազոտական աշխատանքներ:

**3. կտիրապետի** հոգեբանական գիտելիքները գործնականում կիրառելու հոգեբանության մեթոդներին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** **Հոգեկանի ուսումնասիրման մեթոդները.** Դիտում, զրույց, գիտափորձ՝ լաբորատոր և բնական, թեստեր, պրոյեկտիվ թեստեր, հարցաթերթ, սոցիոմետրիա, անկախ բնութագրերի մեթոդ, ներդրված էլեկտրոդների մեթոդ: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ հոգեկանի ուսւումնասիրման ժամանակակից մեթոդները: Կկարողանան՝ ճանաչել մեթոդները և ըստ համապատասխան խնդիրների ընտրություն կատարել: ***Թեմա 2՝*** **Կետտելի թեստի ուսումնասիրում:** Թեստի անցկացման , բանալու հաշվման առանձնահատկությունը: Մաթեմատիկական գործիքակազմ: Դրա կիրառումը թեստի արդյուները հաշվելիս: Արդյունքները գծապատկերների, հիստոգրամների, նկարների, աղյուսակների միջոցով արտացոլել: Կատարել տվյալներ քանակական և որակական վերլուծություն: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ Կետտելի թեստիի անցկացման և բանալու հաշվման բանաձևերը: Կկարողանան՝ կոնկրետ մաթեմատիկական բանաձևերը կիրառել հոգեբանական հետազոտությունների ընթացում: ***Թեմա 3՝*** **Հոգեկան գործընթացների բացահայտմանն ուղղված հոգեբանական վարժություններ:** Հիշողության տեսակներին և զարգացման ուղղված հոգեբանական մեթոդներ: Մտածողության տեսակների, ձևերին և խոսաքի առանձնահատկությունների ճանաչմանը և բացահայտմանն ուղղված

հոգեբանական մեթոդներ: **Անձի տիպական առանձնահատկություններ:** Անձի խառնվածքի, բնավորության, ընդունակությունների ուսումնասիրմանն ուղղված հոգեբանական մեթոդեր: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ Անձի կոգնիտիվ կողմի բացահայտման մեթոդների և մեթոդիկաների առանձնահատկությունները: Կտիրապետեն՝ Հիշողության, մտածողության, խոսքի առանձնահատկությունների բացահայտման մեթոդներին: ***Թեմա 4՝* Պրոյեկտիվ մեթոդների քննարկում:** Տարբեր թերապիանների միջոցով հոգեբանական խնդիրների հաղթահարում: Սթրեսի հաղթահարմանն ուղղված թրենինգ: **Վերջնարդյունքը՝** Կիմանան հոգեբանական խնդիրների թերապիաների մասին: Կկարողանան՝ հոգեբանական թերապիաների, մասնավորապես, սթրեսի հաղթահարման կոնկրետ միջոցի: ***Թեմա 5՝* Խմբային և անհատական թրենինգ:** Խմբային թրենինգի սկզբուներն ու գործառույթները: Խմբային թրենինգի հոգեբանական ներգործության վերլուծություն: Խմբային և անհատական թերապևտիկ աշխատանքների համեմատական վերլուծություն: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ թերապևտիկ անհատական և խմբային աշխատաների մասին գիտական ւ գիտելիք: Կկարողանան՝ վերլուծել խմբային և անհատական աշխատանքների անցկացման առանձնահատկություններն՝ ըստ խնդրի:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 64. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 65. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 66. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

17. ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

# Տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացներ

**10/H09. Կիրառական էթնոհոգեբանություն** (4 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ուսումնասիրել էթնիկական խմբերի բնութագրերը, էթնոգենեզի հիմնական փուլերը, միջէթնիկական հարաբերությունների տեսակները, ազգային հոգեկերտվածքը և բնավորությունը, ազգային սիմվոլները և ստերեոտիպերը:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** այն փաստերը և օրինաչափությունները, որոնք բացահայտում են ազգային խմբերի հոգեբանական առանձնահատկություններն ընդհանրապես և կոնկրետ ազգերինը մասնավորապես:

2. **կկարողանա** կապ հաստատել այդ փաստերի և օրինաչափությունների միջև, որոնք վերաբերում են հոգեբանական կողմի ոչ հոգեբանական դրսևորումներին , բացահայտել ազգային բնավորության էությունը և բաղադրիչները , ազգային ինքնագիտակցության կառուցվածքը և ձևավորման փուլերը:

3. **կտիրապետի** ազգային սիմվոլների կիրառման հոգեբանական ձևերին և մեթոդներին, կրոնի և ազգային հոգեկերտվածքի փոխներգործության հոգեբանական կարգավորման հմտություններին՝ ինչպես կրթական համակարգում, այնպես էլ սոցիալական միջավայրում:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Էթնոս, ազգ և էթնիկական հոգեբանության խնդիրները: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ կիրառական էթնոհոգեբանության առարկան և խնդիրները, առարկայի տեղը հոգեբանական գիտությունների համակարգում, կապն այլ գիտությունների հետ: Կկարողանան՝ գնահատել էթնոսների և ազգերի բոլոր հիմնական գծերը և առանձնահատկությունները: ***Թեմա 2՝*** Էթնիկական ինքնագիտակցություն: **Վերջնարդյունքը՝** Կիմանան, որ անհատական ինքնագիտակցությունը իր մասին ունեցած պատկերացումների և սեփական անձնային գծերին տրված գնահատականների համակարգն է: Կկարողանան՝ գնահատել միջէթնիկական կոնֆլիկտների հետևանքները: ***Թեմա 3՝*** Մշակույթ և գլոբալ էթնոխմբային ինքնապաշտպանություն: **Վերջնարդյունքը՝** Կիմանան, որ մշակութային երևույթները կատարում են էթնոպաշտպան գործառույթներ: Կկարողանան՝ գնահատել մշակութային ավանդույթները: ***Թեմա 4՝*** Ազգային սիմվոլներ: **Վերջնարդյունքը՝** Կիմանան ազգային սիմվոլների հոգեբանական իմաստը: Կկարողանան գնահատել սեփական

ազգի սիմվոլները օտար ազդեցություններից պաշտպանվելու համար: ***Թեմա 5՝*** Էթնիկական ստերեոտիպեր: **Վերջնարդյունքը՝** Կիմանան, որ էթնիկական ստերեոտիպերը որոշակի պատկերացումներ և դիրքորոշումներ են, համոզմունքներ սեփական կամ այլ էթնոսի մասին: Կկարողանան գնահատել դրանց ազդեցությունը էթնիկական բնավորության վրա: ***Թեմա 6՝*** Էթնիկական հոգեկերտվածք, ազգային ոգի և բնավորություն: **Վերջնարդյունքը՝** Կիմանան Էթնոսի հոգեկերտվածքի հիմնական բաղադիրչները: Կկարողանան գնահատել դրանց ազդեցությունը էթնիկական բնավորության,խառնվածքի և մտածելակերպի վրա:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 67. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 68. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 69. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

18. **ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H21. Սոցիալ-հոգեբանական տեխնոլոգիաներ** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Առարկայի նպատակն է՝ սոցիալ-հոգեբանական տեխնոլոգիաների կիրառմամբ ուսումնասիրել անհատի՝ որպես սոցիալական դերակատարի, ներխմբային փոխներգործությունները, խմբային դինամիկան, դերային վարքի դրսևորումները, միջանձնային փոխհարաբերությունները, հաղորդակցման առանձնահատկությունները, սոցիալական կոնֆլիկտները, դիրքորոշումները և այլ սոցիալ-հոգեբանական երևույթները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** բոլոր փաստերն և օրինաչափությունները, որոնք բացահայտում են սոցիալ- հոգեբանական երևույթները, խմբային դինամիկան, անձի սոցիալականացման ինստիտուտները, սոցիալական վարքի տեսակները, «Ես» - կոնցեպցիան և նրա կառուցվածքը, ինչպես նաև սոցիալական կոնֆլիկտները, խոսքային հաղորդակցման տեսակներն և դիրքորոշումների փոփոխությունները, իմացական աններդաշնակության հիմնախնդիրներն ու սոցիալական հոգեբանության կիրառական նշանակությունը:

2. **կկարողանա** գտնել տեղն ու դերը ներխմբային գործունեության ընթացքում, ձևավորել, կայունացնել, և կառավարել միջանձնային փոխհարաբերությունները խմբում: Ձևավորել սոցիալական հարաբերություններ և դիրքորոշումներ խմբում: Գտնել ուղիներ ներխմբային փոխներգործության ընթացքում առաջացած սոցիալական կոնֆլիկտները հաղթահարելու համար: Վերլուծել անձի վարքը, սոցիալական գործընթացները սոցիալական հոգեբանության տեսանկյունից: Ներխմբային գործունեության ընթացքում ներազդել անհատի և խմբի վարքի վրա:

3. **կտիրապետի** սոցիալական հոգեբանության հիմնական մեթոդներին և տեխնոլոգիաներին, դրանց կիրառմանը՝ մարդկային գործունեության տարբեր ոլորտների ուսումնասիրության գործընթացում: Սոցիալ- հոգեբանական և հասարակական հոգեբանական երևույթների փոխազդեցությանը և փոխկապվածությանը, դրանց մեկնաբանմանն և վերլուծությանը, պրակտիկ գործունեության իրականացմանը: Անձի և խմբի փոխներգործության, հոգեսոցիալական, իմացական և հոգեֆիզիոլոգիական զարգացման մակարդակը ախտորոշելու ընդունակությանը :

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Միջանձնային հարաբերությունների կառուցման տեխնոլոգիաներ: **Վերջնարդյունքը՝** Կիմանան միջանձնային հարաբերությունների էությունը և փոխհարաբերությունների տեսակները: Կկարողանան գնահատել միջխմբային հարաբերությունների բնույթը և յուրահատկությունը: ***Թեմա 2՝*** Սոցիալ-հոգեբանական ադապտացիայի տեխնոլոգիաներ: **Վերջնարդյունքը՝** Կիմանան սոցիալ-հոգեբանական ադապտացիայի տեխնոլոգիաների տեսակները: Կկարողանան՝ կիրառել դրանք կենսագործունեության նոր պայմաններում: ***Թեմա 3՝*** Կոնֆլիկտային վարքի ախտորոշման տեխնոլոգիաներ: **Վերջնարդյունքը՝**

Կիմանան սոցիալական վարքի տեսակները և կոնֆլիկտների պատճառները: Կկարողանան՝ ախտորոշել և կանխարգելել կոնֆլիկտները: ***Թեմա 4՝*** Ընտանիքի անդամների հանդեպ դրսևորվող վերաբերմունքի տեխնոլոգիաներ: **Վերջնարդյունքը՝** Կիմանան ընտանիքում ՝միջանձնային հարաբերությունների էությունը և փոխհարաբերությունների տեսակները: Կկարողանան գնահատել ընտանիքի անդամների փոխհարաբերությունները, փոխըմբռնումը, համախմբվածության մակարդակը: ***Թեմա 5՝*** Գործարար և դերային խաղի տեխնոլոգիաներ: **Վերջնարդյունքը՝** Կիմանան գործարար հանդիպումների և գործարար զրույցի փուլերը: Կկարողանան կիրառել գործարար հաղորդակցության տեխնոլոգիաները: ***Թեմա 6՝*** Անձի մասնագիտական ուղղվածության ձևավորման տեխնոլոգիաներ: **Վերջնարդյունքը՝** Կիմանան հույզերի և զգացմունքների դրսևորման էթնիկական տարբերությունները: Կկարողանան կիրառել դրանք միջանձնային հարաբերություններում:

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 70. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 71. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 72. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

19. **ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H26. Գովազդի և PR հոգեբանություն** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգված և ամբողջական գիտելիքներ հաղորդել հանրային կապերի ռազմավարությունների և գովազդային ոլորտի, ոլորտին վերաբերվող հոգեբանական տեխնոլոգիաների առանձնահատկությունների, առարկայի, նպատակների, խնդիրների, ուսումնասիրության մեթոդների և տեխնիկաների մասին:

Ծրագիրն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական և գործնական գիտելիքներ ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև վերոնշյալ ոլորտների գործունեության ընթացքում անհրաժեշտ հոգեբանական տեխնիկաների և տեխնոլոգիաների գործնական կիրառման վերաբերյալ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1.կիմանա** հասարակայնության հետ կապերի և գովազդի հոգեբանության էությունը, հասարակայնության հետ կապերի և գովազդի բաժինները, PR խորհրդատվությունը, PR ծրագրի պլանավորումը, լրատվամիջոցների հետ աշխատանքի առանձնահատկությունները գովազդում, PR նպատակները, հանրության դերը PR-ում, արդյունքների վերլուծություն, PR էթիկա:

**2. կկարողանա** կատարել իրավիճակի վերլուծություն, սահմանել PR և գովազդի նպատակները, կազմել PR ծրագիր, կազմել PR-ի և գովազդի ծրագրի բյուջե, որոշել նպատակային խմբերն ու դրանց վրա ներգործող լրատվամիջոցները, կատարել PR ծրագրի արդյունքների վերլուծություն:

**3. կտիրապետի** հասարակայնության հետ կապերի և գովազդի տարատեսակներին, PR-ի և գովազդային ծրագրի իրականացման ձևերին ու գործիքներին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1***՝ Գովազդի հոգեբանության տեսական հիմքերը, գովազդի պատմության սկզբնավորման ակունքները, գովազդի սահմանումը, նպատակը, ֆունկցիաները: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան գովազդի և գովազդի հոգեբանության պատմությունը, և հիմնական գործառույթները, որոնք կկարողանան կիրառել հետագա պրակտիկ աշխատանքում: ***Թեմա 2***՝ PR-ի էությունն ու սահմանումը, PR-ի զարգացման փուլերը ըստ Կատլիպի: Տեքստերի ձևավորման հիմնական սկզբունքները, Հաննինգի բանաձև: **Վերջնարդյունքը**՝ Կիմանան PR-ի զարգացման փուլերը, անցած ուղին, PR տեքստեր կազմելու հիմնական սկզբունքները և իհարկե բանաձևը: Ստացված գիտելիքի շնորհիվ կկարողանան գրագետ ձևով կազմել գովազդային և PR հայտարարությունները, և բանաձևի միջոցով ստուգել թե որքանով է այն ընթեռնելի մարդկանց համար: ***Թեմա 3***՝ Գովազդը որպես զանգվածային լրատվամիջոցների ռեսուրս, տպագրական գովազդ, ռադիո և հեռուստագովազդ, տրանսպորտային գովազդ, գովազդը ինտերնետում (բաններային գովազդ): **Վերջնարդյունքը**՝ Կիմանան գովազդային հիմնական ուղղությունները և տեսակները: Ստացված տեսական գիտելիքը կկարողանան կիրառել պրակտիկ աշխատանքում:

Գերազանց իմանալով գովազդի տեսակները հետագայում շատ հեշտ կկողմնորոշվեն թե որ գովազդային տեսակն է իրենց համար անհրաժեշտ կիրառել: ***Թեմա 4՝*** Հոգեկան գործընթացները գովազդում, AIDA (AIMDA), AISAS, 4U մոդելները, կիրառումը գովազդում: **Վերջնարդյունքը՝** Կիմանան ամենատարածված գովազդային ազդեցության մոդելների մասին, որի միջոցով կարող են բարձրացնել գովազդի արդյունավետությունը: ***Թեմա 5՝*** Բրենդ և բրենդինգ, սոցիալական և քաղաքական գովազդ, հոգեբանական հիմքը: **Վերջնարդյունքը՝** Կիմանան բրենդի ձևավորման պատմությունը,և բրենդինգի գործընթացը, որի միջոցով հետագայում կկարողանան արդյունավետ բրենդինգ իրականացնել: Կծանոթանան սոցիալական գովազդի հիմնական տեսակների, ֆունկցիաների հետ, և կկարողանան արդյունավետ սոցիալական գովազդի պլան կազմել և իրականացնել:
***Թեմա 6՝*** Գովազդը ինտերնետում կամ համացանցային գովազդ: **Վերջնարդյունքը՝** Կիմանան գովազդի ամենատարածված տեսակներից մեկի՝ ինտերնետային գովազդի մասին, և կկարողանան կիրառել համացանցային գովազդի տեսակները ըստ պահանջի: ***Թեմա 7՝*** PR արշավի իրականացման սկզբունքները, կարծրատիպ և կարծրատիպացման գործընթաց: **Վերջնարդյունքը՝** Կիմանան ինչպես կազմակերպել գրագետ PR արշավներ, և կկարողանան կիրառել պրակտիկայում: ***Թեմա 8՝*** Նեյրոլինգվիստիկ ծրագրավորման (ՆԼՊ) կիրառման հնարավորությունները գովազդային գործունեությունում, <25-րդ կադր> հասկացությունը: **Վերջնարդյունքը՝** Կիմանան գովազդի հոգեբանության ոլորտում կիրառվող հոգեբանական հիմնական տեսությունները, և ստացված գիտելիքները կկիրառեն պրակտիկ աշխատանքում: ***Թեմա 9՝*** Գույնի կիրառման հնարավորությունները գովազդում: **Վերջնարդյունքը՝** Կիմանան գույների հոգեբանության հիմնական ֆունկցիաները, գույների նշանակությունը հենց գովազդի ոլորտում, ինչն էլ կնպաստի գրագետ և արդյունավետ ընտրություն կատարելուն: ***Թեմա 10՝*** Քարոզչության հոգեբանություն, նպատակը և խնդիրները, Բեռնայզի <Քարոզ> աշխատությունը: **Վերջնարդյունքը՝** Կիմանան պրոպագանդայի պատմությունը, կիրառումը տարբեր ոլորտներում, կծանոթանան առաջին պաշտոնական PR մասնագետի՝ Բերնայսի աշխատանքին, և ստացված տեսական գիտելիքները կկարողանան կիրառել պրակտիկ աշխատանքում:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,

- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 73. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 74. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 75. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

20. **ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

**10/H13. Կառավարման հոգեբանություն** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.** ուսումնասիրել կառավարման հոգեբանության, որպես գիտական ուղղություն, հիմունքները:

**Կրթական արդյունքները.**
**Գիմանան՝**

- ղեկավարի և աշխատողի անձի ինքնաներկայացման և ինքնադրսևորման և ինքնիրացման հոգեբանակն կողմը
- խմբի առաջնորդության, կոլեկտիվի բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովման և պահպանման հոգեբանական մեխանիզմների ու չափանիշների մասին,
- բիզնեսի կառավարման ազգային հոգեբանական առանձնահատկությունների,
- համաշխարհային տնտեսական առաջատար երկրների կառավարման հոգեբանության յուրահատկությունները:
- գովազդի հոգեբանական մեխանիզմները և առանձնահատկությունները:

**2. Կկարողանան՝**

- բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել իր գիտելիքները,
- համադրել հոգեբանական նոր ինֆորմացիան իր գիտելիքների հետ,
- Վերլուծել կառավարող անձի հոգեբանական բնութագիր և կազմել հոգեգրամաներ,
- կատարել ոչ լայնածավալ գիտահետազոտական աշխատանքներ:

**3. Կտիրապետեն՝**

•Հոգեբանական գիտելիքները գործնականում կիրառելու մեթոդներին:
•գնահատել ղեկավար-ենթակա փոխհարաբերությունները, իրականացնել հոգեբանական վերլուծություններ
• դասավանդել կառավարման ուղղվածությամբ ուսումնական հաստատություններում և ֆակուլտետներում

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝ Կառավարման հոգեբանության զարգացումը, գործառույթներն ու սկզբունքները:** Կառավարման հոգեբանության՝ որպես հոգեբանական գիտության առանձին բնագավառի կայացումը: Կառավարամամ հոգեբանության սկզբնավորման պատմությունը: Կառավարման հոգեբանութ. պատմական զարգացման հիմնական փուլերը: Թեյլորիզմ: Կառավարման և բիզնես հոգեբանության առարկան, խնդիրներն ու նպատակները: Կառավրամն Ֆայոլյան տեսությունը: Կառավարման հոգեբանության սկզբունքներն ու գործառույթները: «Բիզնեսմեն», «Ձեռներեց», «Մենեջեր»հասկացությունները: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ կառավարման հոգեբանության, որպես գիտական ուղղություն առարկան, խնդիրներն ու նպատակները: Կառավարման գիտության զարգացման առանձնահատկությունները հազարամյակների խորքից մինչև մեր օրերը: Կկարողանան՝ վերլուծել կառավարման գործառույթները հոգեբասնական մակարդակում: **Թեմա 2՝ Պրոֆեսոգրամմա և հոգեգրամա Արդյունավետ ղեկավարի հոգեգրաման:** Պրոֆեսոգրաֆիա և հոգեգրամմա հասկացությունները: Ղեկավարի արդյունավետության ապահովման հոգեբանական առանձնահատկությունները: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ պրոֆեսոգրամայի, հոգեգրամայի, մասնագիտական հոգեբանական կողմնորոշման և հոգեբանական ընտրության գիտական գիտելիքի մասին: Կկարողանան՝ կազմել ղեկավարի գործունեության արդյունավետությունն ապահովող հոգեբանական առանձնահատկությունների համախումբը՝ հոգեգրաման: **Թեմա 3՝ Ղեկավար-ենթակա փոխհարաբերությունների հոգեբանական կողմը:** Կոլեկտիվը որպես խմբի տեսակ: Կոլեկտիվի բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովման նախադրյալները: Ղեկավար–ենթակա փոխհարաբերությունների հոգեբանական վերլուծությունը: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ կոլեկտիվի, որպես խմբի տեսակ, հոգեբանական կողմը, կոնֆլիկտի ւ հակասության հոգեբենական սահմանումները: Կտիրապետեն՝ Կոլեկտիվի բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովման հոգեբանական նախադրյալների իմացությանը և կոնֆլիկտի հարթման հոգեբանական մեխանիզմներին: **Թեմա 4՝ Կառավարման մոդելների հոգեբանական վերլուծությունը**: Կառավարման ճապոնական մոդելի հոգեբանական վերլուծությունը: Կառավարման ամերիկյան մոդելի հոգեբանական վերլուծությունը: Կառավարման

եվրոպական (իտալական, գերմանական, անգլիական, ֆրանսիական) հոգեբանական վերլուծությունները; Կառավարման արաբական մոդելի հոգեբանական վերլուծությունը : **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ Կառավարման առաջատար տնտեսահամակարգ ունեցող երկրների կառավարման հոգեբանական առանձնահատկությունները: Կկարողանան՝ վերլուծել և ներկայացնել տարբեր երկրների կառավարման հոգեբանական մոդելները: **Թեմա 5՝ Գովազդի հոգեբանական վերլուծությունը:** Գովազդի տեսակները, սկզբունքները, կանոնները: Անձը և գունաընկալումը և դրա կապը գովազդի արդյունավետության հետ: Անձի հոգեկան գործընթացների՝ ուշադրություն, զգայություն, ընկալում, մտածողություն, երևակայություն, հիշողություն, դերը գովազդում: Գովազդի հոգեբանական մեխանիզմները: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ -գովազդին ներկայացվող հոգեբանական պահանջները: Կտիրապետեն՝գովազդի հոգեբանական մեխանզմները վերլուծելու գիտելիքին: **Թեմա 6՝ Հայ էթնո առանձնահատկությունների վերլուծությունը՝ վաճառականների օրինակով:** Հայ վաճառականության հոգեբանական հիմքերը: Ազգային-էթնո բնութագրերի հոգեբանական վերլուծություններ: Վաճա-ռականությունը որպես ոչ միայն բիզնեսի հիմնական և կարևոր դրսևորում հայ մարդու կյանքում, այլև ինքնադրսևորման և ինքնիրացման պահանջ-մունքի բավարարաման դրսևորում: **Վերջնարդյունքը՝** Կկարողանան՝ հասկանալ հայ էթնո որակների հոգեբանական կողմը և գիտելիքը համադրել գործարարի գործունեության հետ: Կտիրապետեն՝ ժամանակակից գործարարի էթնոհոգեբանական առանձնահատկությունների վերլուծությանը:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 76. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 77. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 78. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| Հաճախում | Միավոր |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

21. **ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

# 2. Մագիստրոսական ծրագիր

## «Կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա» Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

**05/H08. Համակարգչագիտություն** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողների մեջ զարգացնել ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտին վերաբերվող ընդհանուր տեսական և պրակտիկ գիտելիքներ: Ծրագրի նպատակն է նաև ուսանողներին զինել ինֆորմատիկայի բնագավառում տարբեր ծրագրերի ուսումնասիրությունով և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը վերաբերող գիտելիքներով:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա**

1.1. Լսել և հասկանալ լսածի հիմնական միտքը և հատուկ ինֆորմացիան,

1.2. Վերարտադրել և վերլուծել տվյալ թեմաները,

**2. կկարողանա**

2.1. Ինքնուրույն օգտվել համակարգչից,

2.2. Բացատրել մասնագիտական տերմինները,

2.3. Քննարկել թեման՝ օգտագործելով նոր թեմատիկ մասնագիտական բառապաշար,

**3. կտիրապետի**

3.1. Մասնագիտական տարբեր ինֆորմացիոն ծրագրերին,

3.2. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների անձնահատուկ կառույցներին,

3.3. Թեմատիկ մասնագիտական նոր բառապաշարին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1***՝ ԷՀՄ-ի պատմությունը, սերունդները: Անհատական համարգչի կառուցվածքը, արտաքին և ներքին սարքեր, ելքի-մուտքի սարքեր: Ինֆորմացիայի ներկայացման ձևերը, չափման միավորները:

Հիշողության տեսակներ և կազմակերպման ձևեր: Օպերացիոն համակարգեր հիմնական տարրերը: Windows օպերացիոն միջավայրում աշխատանք պատուհանների և ֆայլերի հետ: – **վերջնարդյունք՝** Կկարողանա ինքնութույն գրել, մուտքագրել մագիստրական թեզը, կատարել հղումներ, համարակալում, թվարկում, նկարների, աղյուսակների և գրաֆիկների տեղադրում, կկարողանա կառուցել բովանդակություն և գրականության ցանկը և այլն: ***Թեմա 2՝*** Համակարգչային և կիրառական ծրագրեր: Ուտիլիտային ծրագրեր: Վիրուսներ և հակավիրուսային ծրագրեր: ՏՀՏ գրաֆիկական սարքավորումներ և դրանց կիրառումը մասնագիտական ոլորտում: Հաշվողական ցանցերի դասակարգում: Լոկալ ցանցերի տոպոլոգիա: Ինտերնետ ցանցի ծառայություններից օգտվելու մեթոդներ: Մասնագիտությանը առնչվող օգտակար կայքեր – **վերջնարդյունք՝** Կկարողանա ճիշտ և անվտանգ աշխատել համացանցում:: ***Թեմա 3՝*** MS Office Word տեքստային խմբագրիչի գործիքային վահանակի ֆունկցիաները: MS Office Word տեքստային խմբագրիչում տեքստի մուտքագրում, խմբագրում և ձևավորում: Աշխատանք աղյուսակների և օբյեկտների հետ MS Office Word տեքստային խմբագրիչում: MS Office Word տեքստային խմբագրիչի միջոցով մասնագիտական թեստերի պատրաստում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում – **վերջնարդյունք՝** Կկարողանա պատրաստի մագիստրոասական թեզի համար պատրաստել սհնորհանդես և ներկայացնել այն: ***Թեմա 4՝*** MS Office Excel էլեկտրոնային աղյուսակների գործիքային վահանակի ֆունկցիաները: Տվյալների մուտքագրում, տիպերի հայտարարում և աղյուսակի ձևավորում MS Office Excel էլեկտրոնային աղյուսյակում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում – **վերջնարդյունք՝** աշխատել ցուցակների հետ:***Թեմա 5՝*** Թվաբանական գործողություններ տվյալների հետ, դիագրամների կառուցում MS Office Excel էլեկտրոնային աղյուսյակում: Աշխատանք ֆունկցիաների հետ MS Office Excel էլեկտրոնային աղյուսյակում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում – **վերջնարդյունք՝** Կկարողանա ինքնութույն գրել, մուտքագրել մագիստրական թեզը, կատարել հղումներ, համարակալում, թվարկում, նկարների, աղյուսակների և գրաֆիկների տեղադրում, կկարողանա կառուցել բովանդակություն և գրականության ցանկը և այլն: ***Թեմա 6՝*** MS Office Power Point շնորհանդեսային ծրագրի գործիքային վահանակի ֆունկցիաները: MS Office Power Point ծրագրում դրվազների ավելացում, ձևավորում, յուրաքանչյուր դրվագի համար անիմացիաների կարգավորում; MS Office PowerPoint ծրագրի դրվազներում օբյեկտների ներմուծում, ձևավորում, դրվագում յուրաքանչյուր օբյեկտի համար անիմացիաների կարգավորում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում – **վերջնարդյունք՝** գրաֆիկական

պատկերներով, նկարներով, աղյուսակներով ներկայացնել մագիստրոսական թեզը։

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա։

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 79. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 80. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 81. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

22. **ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն։

**10/H34. Հոգեբուժություն (3 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ, 4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Տալ ուսանողներին ներոտիկ, սոմատոֆորմ և սթրեսով պայմանավորված խանգարումների, ինչպես նաև շիզոֆրենիայի, շիզոտիպիկ և այլ զառանցանքային խանգարումների վերաբերյալ (տեսությունների, կլինիկական ձևերի, ախտաբանական դրսևորումների, զարգացման, բուժական մոտեցումների) խորացված գիտելիքներ և

հմտություններ համապատասխան հոգեբուժության արդի գիտական նվաճումների Այդ գիտելիքների և հմտությունների ձեռքբերումն ու կիրառումը կարևոր նախապայման են հանդիսանում մասնագետ-հոգեբանի կողմից համապատասխան իրավիճակներում մասնագիտական եզրակացություն կազմելու, որակավորում տալու, նաև թերապևտիկ միջոցառումներ նախաձեռնելու հնարավորություն:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** նևրոտիկ մակարդակի խանգարումների և շիզոֆրենիայի պատճառագիտությունը, ախտածնության օրինաչափությունները, կլինիկական բնութագրերը, պատկերը, կլինիկական ձևերը, ինչպես նաև թերապևտիկ մոտեցումները:

**2. կկարողանա**

2.1. Տարբերակել շիզոֆրենիայի կլինիկական ձևերը,

2.2. Տարբերակել շիզոֆրենիան այլ փսիխոտիկ խանգարումներից,

**3. կտիրապետի** շիզոֆրենիկ բնույթի և նևրոտիկ մակարդակի խանգարումների ախտորոշման մեթոդներին և գնահատմանը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Շիզոֆրենիայի կլինիկական ձևերը: Պարանոիդ կամ զառանցանքային շիզոֆրենիա: Հեբեֆրենիկ շիզոֆրենիա: Կատատոնիկ շիզոֆրենիա: Հասարակ շիզոֆրենիա: Մնացորդային շիզոֆրենիա: Հետշիզոֆրենային դեպրեսիա: Չտարբերակված շիզոֆրենիա:
***Թեմա 2՝*** Սուր եւ անցողիկ փսիխոտիկ խանգարումներ՝ կլինիկա, դասակարգում, ախտորոշում Փսիխոգեն պարանոիդ: Ռեակտիվ դեպրեսիա: Ռեակտիվ հալյուցինոզ: Սուր աֆեկտիվ ռեակցիաներ՝ աֆեկտիվ ստուպոր, աֆեկտիվ գրգռվածություն: ***Թեմա 3՝*** Նևրոտիկ խանգարումների որոշ տեսական հիմնահարցեր: «Նևրոզ» և «նևրոտիկ խանգարում» հասկացությունները: Նևրոտիկ խանգարումների կլինիկական բազմազանությունը: Նևրոզ և անձ փոխհարաբերությունները: Նևրոտիկ խանգարումների երեք մակարդակները: ***Թեմա 4՝*** Նևրոտիկ խանգարումների ժամանակակից դասակարգումը, տեսակները՝ կլինիկա, դիագնոստիկա, բուժում: Նևրասթենիա: Օբսեսիվ կոմպուլսիվ խանգարումներ: Դեպերսոնալիզացիայի-դեռեալիզացիայի համախտանիշ: Տագնապային խանգարումներ: Դիսոցիացված (հիստերիկ) խանգարումներ: ***Թեմա 5՝*** Ծանր սթրեսի հակազդման և հարմարվողականության խանգարումներ: Սթրեսի կոնցեպցիան և հետսթրեսային խանգարումներ՝ սոմատիկ, հոգեկան և սոցիալական հակազդման տեսակները: Սթրես հասկացությունը: Սթրեսի դասակարգումը և նրա դրսևորումները: ***Թեմա 6՝*** Հետսթրեսային խանգարումներ՝ սուր սթրեսային ռեակցիա, նոզոգեն ռեակցիաներ, հետտրավմատիկ սթրեսային խանգարում, անձի հետտրավմատիկ զարգացում, հարմարվողականության խանգարում:

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատումը կատարվում է տվյալ դասընթացի հիմնական նյութի իմացությամբ, հասկացածը գրավոր և բանավոր խոսքով ներկայացնելու, ինքնուրույն ձևով լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ունակությունների դրսևորման հիման վրա:

- Գնահատման ձևեր՝ ստուգողական գրավոր և բանավոր ներկայացումներ,
- Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների գումար, եզրափակիչ քննություն, հաճախումների և դասերին ցուցաբերած ակտիվության բաղադրիչ,
- Գնահատման բաղադրիչներ (գնահատման քայլը՝ 0.5).

| **Քննության տեսակը** | **Միավոր** |
|---|---|
| 82. Առաջին միջանկյալ | 0-4 |
| 83. Երկրորդ միջանկյալ | 0-4 |
| 84. Եզրափակիչ քննություն | 0-10 |

| **Հաճախում** | **Միավոր** |
|---|---|
| Դասահաճախում և ակտիվություն | 0-2 |

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

**23. ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ** դասախոսությունների նյութեր, ուսումնական և ուղղորդիչ տեքստեր, դասագրքեր և մասնագիտական գրականություն:

## Լրացական դասընթացներ

**18/H01. Անգլերեն լեզու** (0 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, ստուգարք*

**Նպատակը.**

Երկու կիսամյակ տևողությամբ ուսումնական գործունեության ընթացքում “Սոցիալական հոգեբանություն” ֆակուլտետի ուսանողներին ուսուցանել անգլերեն լեզու, որն իր մեջ ներառում է քերականական ժամանակաձևերի, կառուցվածքների ուսումնասիրում և ամրապնդում՝ նախօրոք մշակված վարժությունների և թեմատիկ նյութերի միջոցով, համապատասխան մասնագիտական տերմինների, բառերի ու արտահայտությունների ուսումնասիրում և տիրապետում՝ համապատասխան տեքստերի միջոցով, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում՝ օգնելու սովորողներին զարգացնելու խոսքային հմտություններն ու կարողությունները, լրացուցիչ մասնագիտական և ոչ մասնագիտական տեքստերի վրա ինքնուրույն աշխատանք՝ օգտագործելով համապատասխան բառարաններ (տեքստերի թարգմանություն՝ անգլերենից-հայերեն, հայերենից-անգլերեն, տեքստերի վերարտադրում, բառարանային աշխատանք և այլն): Ծրագրի շրջանակներում նախատեսված է սովորողներին ծանոթացնել լեզուն ուսումնասիրելու հետ կապված խնդիրներին, նպատակներին,

սկզբունքներին, ինչպես նաև օգնել հաղթահարելու սովորելու ընթացքում հանդիպող դժվարություններն ու խոչընդոտները:

Դասընթացի ընթացքում ուսանողները ձեռք կբերեն համապատասխան լեզվական տեսական և գործնական գիտելիքներ, որոնք նրանց կօգնեն արդյունավետորեն և ինքնուրույն օգտվելու անգլերեն լեզվով մասնագիտական տեքստերից, հաղորդակցվելու, մասնակցելու բանավեճերի, քննարկումների, ներկայացնելու հավելյալ նյութեր /պրեզենտացիաներ/:

**Կրթական արդյունքները.**

**1. կիմանա**

1.1. անգլերեն լեզվի ժամանակաձևերը, քերականական կառուցվածքները, մասնագիտական բավարար բառապաշար;

1.2. անհրաժեշտ ուսումնական ձեռնարկների, դասագրքերի արդյունավետ օգտագործման ձևերն ու եղանակները՝ խթանելու համար անգլերեն լեզվի զարգացմանն ու խորացմանը,

1.3. համապատասխան մեթոդիկա՝ մասնագիտական տերմինների և բառապաշարի մտապահման և ամրապնդման համար,

1.4. Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում,

**2. կկարողանա**

2.1. ճշտորեն օգտագործել քերականական ժամանակաձևերը և կառուցվածքները,

2.2. օգտվել անգլերեն լեզվով մասնագիտական գրականությունից, մեթոդական ուղեցույցներից՝ խորացնելու համար մասնագիտական գիտելիքները,

2.3. արդյունավետորեն օգտագործել բառարանները,

2.4. պատրաստել պրեզենտացիաներ, զեկուցումներ,

